№ 250 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 10 ՆՈՅԵՄԲԵՐԻ

1910

ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 10 ՆՈՅԵՄԲԵՐԻ № 250

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Խմբագրատան տելեֆօն № 253.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻԿԱՅ 1911 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(39-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 2 ամսվանը՝ 2 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք։

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 32 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ։

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն, և միևնոյն ժամանակ 40 կոպ. նամականիշով։

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով առեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ։

Հին բաժանորդներից խնդրվում է կցցնել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով։

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Հինգշաբթի, նոյեմբերի 11-ին
Կովկասեան Կայսերական Գիւղատնտեսական Ընկերութեան դահլիճում կայանալու է

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՒ ՏՆԱՅՆԱԳՈՐԾ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

1. Մեղուների որդնացաւը Անդրկովկասում,—զեկուցումն Անդ. Բարխուդարեանի։
2. Կռիւ «որդնացաւի» դէմ,—զեկուցումն Գորբաչեվի։
3. Որդնացաւը Ռուսաստանում,—հաղորդագրութիւն Եղ. Քալանթարի։

Սկիզբը երեկ. ժամը 7-ին։ Կարող են ներկայ լինել նաև հիւրեր։ առ. (ա.օ.) 1259. 2—1

ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԱՋ

Այսօրվանից բաց ենք անում առաջիկայ 1911 թւականի համար «Մշակի» բաժանորդագրութիւնը։

Եւ ջերմ հաւատով դէպի մեր սատանձնած գաղափարական ուխտեալ առաքելութիւնը, ոգևորված ժողովրդի առաջադիմութեան վեհ տենչանքներով, վստահ մեր աշխատաւորների անձնուէր գործակցութեան վրա, մենք բաց ենք անում «Մշակ» լրագրի նոր տարեշրջանը, որը առաջ կը տանենք ծրագրական մի կռուի գործունէութեամբ։

Նոր տարեշրջանի հետ կապված են շատ ակնկալութիւններ և սպասելիքներ մեր հասարակական մտածողութեան զիտակցութեան և զարգացման բեղմնաւոր արդիւնաւորութեան համար։

Ժամանակակից կեանքը հանդէս է հանել մի շարք էական հոգսեր, պատմական բոլէն առաջ է մղել ճակատագրական հարցեր, անցողական շրջանը վերածնութեան կոչեր է դրել մտածող հասարակութեան առաջ։

Եւ աներկբայ՝ մամուլը իր լուսաւոր ճիգերով և իր անկեղծ խօսքով առաջնակարգ տեղն է բռնում այն զօրաւոր գործօնների շարքում, որոնց վերապահված է փրկարար ղեկավարական դեր կատարելու իրականութեան մէջ։

Բանալով նոր բաժանորդագրութիւն՝ մենք սկսում ենք բարոյական պարտականութեան մի տարի, որը պէտք է յաւերժական լինի և նրանով, որ նա ամբողջացնում է լուսաւոր գաղափարական մի շրջան հրապարակախօսական մաքուր, անկաշառ և ազնիւ գործունէութեան։

Այս առաջիկայ 1911 թւականը կը գայ բոլորելու «Մշակի» քառասնամեակը, որովհետև այդ շրջանից քառասուն տարի առաջ հիմք դրվեց հրապարակախօսական այն յաւերժ լուսաւոր գործունէութեան, որ կրթող և ղեկավարող հանդիսացաւ մեր երիտասարդ սերունդների լուսագոյն խաւերի համար։

Մենք ձեռնարկում ենք նոր գործունէութեան՝ այն հզօր գիտակցութեամբ, որ մեր արածը յայն ժողովրդասիրական և փրկարար մի ազնուագոյն գործ է։

Ա. Քալանթար

ԼԵՎ ՏՈԼՍՏՈՅԻ ՄԱՀՎԱՆ ՇՈՒՐՋԸ

Մենք ստացանք երէկ մեր Պետերբուրգի թղթակցից հետևեալ հեռագիրները Լեվ Տոլստոյի մահվան առիթով տեղի ունեցած դէպքերի մասին։

I

Պետերբուրգ, 9 նոյեմբերի

Լեվ Տոլստոյի մահվան առիթով առաջադիմական թերթերը լոյս տեսան սև շրջանակներով։

Դասախօսութիւնները բոլոր բարձրագոյն դպրոցներում դադարեցվեցին։ Հոգեհանգիստների փոխարէն երգեցին «Յաւերժ յիշատակ» ամենուրեք։

Ուսանողները մտադիր էին անցնել փողոցներով ի պատիւ հանգուցեալի։

Զօրքերը և հեծեալ ոստիկանները շրջեցին փողոցները։

Պետական Դուման յարգեց Լեվ Տոլստոյի յիշատակը ոտքի կանգնելով։ Բացառութիւն կազմեցին ծայրայեղ աջակողմեանները և հոգևորականները։ Դուման ի նշան սգի փակեց իր նիստը։

Այդ առիթով աջակողմեանների պարագլուխները Զամըսլովսկիի առաջնորդութեամբ բողոք ներկայացրին Դումային։ Չը ստորագրեցին Բօբրինսկին, Շուլգինը։

Հոկտեմբերեանները իրանց նիստում որոշեցին ուղարկել Անրէպին և Ռօձեանկօյին պրէմիէր մինիստր Ստօլիպինի և միտրօպօլիտ Անտօնիի մօտ խնդրելու թոյլտւութիւն հոգեհանգիստներ կատարելու համար։

Ստախովիչը և Մակլակովը փորձեցին հոգեհանգիստ կատարել տալու ոչ պաշտօնական եղանակով, բայց չաջողվեց։

Ազեան

II

Պետերբուրգ, 9 նոյեմբ. 4 ժ. 30 ր. առ.

Պարիզում կազմակերպվում է միջազգային մի կօմիտէտ, որը հանգանակութիւն պիտի բանայ Եասնայա-Պօլեանան գնելու ու միջազգային սեփականութիւն դարձնելու համար։

Համալսարանականներից 1,000 հոգի, ժողով գումարելուց յետոյ, դէմօնստրատիվ կերպով դիմեցին սինօդի շէնութիւնը, սակայն յետ մղվեցին։

Սգին միացան և միւս լրագիրները՝ բացի «Земщина» լրագրից։

Ստօլիպինը կատէգօրիկ կերպով մերժեց ընդունել հոկտեմբերեանների պատգամաւորութիւնը։

Ազեան

Պետերբուրգ, 8 նոյեմբ. (պաշտօնական)

Ներքին գործերի մինիստրի ամենահպատակ զեկուցագրի վրա Տոլստոյի մահվան մասին Նորին Կայսերական Մեծութիւնը բարեհաճեց մակագրել հետևեալ խօսքերը.

«Սրտանց ցաւում եմ մեծ գրողի մահվան համար, որ իր գրուածքների մէջ իր հանճարի արշալոյսին մարմնացնում էր ռուսական կեանքի ամենապայծառ ժամանակներից մէկի մայրենի դիմքերը։ Թող Տէր դառնայ նրա ողորմած դատաւորը»։

Երէկ երեկոյեան յետաձգվեցին ներկայացումները Փոքր և Նոր դրամատիկական թատրոններում. բոլոր մնացած թատրոններում ներկայացումները տեղի ունեցան։ Ալէքսանդրեան թատրոնում առաջին գործողութիւնից յետոյ դրամատուրգ Րիժկովը առաջարկեց յոտնկայս յարգել Տոլստոյի յիշատակը։ Սօլեանոյ գորոդօկում Պիրագովեան Մանկավարժական Ընկերութեան նիստում պրօֆ. Նէչաէվը ճառ արտասանեց Տոլստոյի մասին և առաջարկեց յարգել նրա յիշատակը ոտքի կանգնելով։ Մասնաւոր թատրոնները որոշեցին յետաձգել ներկայացումները թաղման օրը։ Միխայիլ Ստախովիչի նախաձեռնութեամբ մայրաքաղաքի եկեղեցիներից մինում կատարվեց հոգեհանգիստ։

Կայսերական Մեծ Իշխան Կօնստանտին Կօնստանտինովիչի նախագահութեամբ ռուս լեզուի և գրականութեան բաժնի արտակարգ նիստը. որոշվեց հեռագրով ցաւակցութիւն յայտնել Տոլստոյի այրիին և դեկտեմբերի 19-ին հանգուցեալի յիշատակին գումարել հանդիսաւոր նիստ։

Համալսարանի պրօֆէսօրների խորհրդի նիստում Տոլստոյի յիշատակը յարգվեց յոտնկայս։ Ընտրվեց մասնաժողով յիշատակը յարգելու եղանակների մասին որոշումներ կայացնելու։ Թաղման օրը որոշվեց դասախօսութիւնները յետաձգել (Հ. Գ.)

Աստապովօ, 8 նոյեմբերի

Գիշերս հանգուցեալի մօտ հերթապահութիւն արին որդիները և մերձաւորները հերթով։ Կոմսուհին եկաւ առաւօտ։

Առաւօտեան պատրաստութիւններ տեսնվեցին մեկնելու։ Ցերեկվայ ժամը 12-ին դիակը դրվեց դագաղի մէջ. նորից սկսվեց վերջին տեսակցութիւնը։ Ժամը 1-ին հանգուցեալի որդիները բարձրացրին դագաղը։ Երբ սգահանդէսը երևաց բակում, հնչեց «Յաւերժ յիշատակը»։ Դագաղի ետևից գալիս էր կոմսուհին Րեազան-Ուրալի երկաթուղու կառավարչի հետ։ Ժամը 1 և 45 րոպէին սգագնացքը շարժվեց դէպի Գօրբաչէվօ։ Կուրկինօ կայարանում այն վագոնը, որի մէջ գտնվում էին Տոլստոյի արւնակիցները, մօտ. տեղական կալուածատէր Տրուխաչէվը և յայտնեց, որ սկիզբը դրեց ֆօնդի Տոլստոյի անուան՝ Տուլայի նահանգում հանգուցեալի յիշատակին դպրոցներ բանալու համար։ (Հ. Գ.)

Մոսկվա, 8 նոյեմբերի

Համալսարանի խորհուրդը և երգ. հաւատարմատարների խորհուրդը յարգեցին Տոլստոյի յիշատակը ոտքի կանգնելով և հեռագիրներ ուղարկեցին այրիին։ Հեռագիրներ ուղարկեցին նահանգական զէմստվօն և քաղաքային վարչութիւնը։ Թաղմանը ներկայ գտնվելու մեկնեցին մօտ 100 պատգամաւորութիւններ զանազան հաստատութիւնների և ընկերութիւնների կողմից պսակներով։ Մեկնում են մօտ 1,000 ուսանողներ։ Մօսկվայի թատրոնները պատգամաւորներ ուղարկեցին պսակներով։ Դրամատիկ գրողների ընկերութիւնը ուղարկեց արծաթեայ պսակ։ Մասնաւոր դրամատիկական թատրոնները յետաձգեցին նոյեմբերի 9-ի ներկայացումները։ (Հ. Գ.)

Վիէննա, 8 նոյեմբերի

Լրագիրները համարեա առանց բացառութեան նուիրված են Տոլստոյին։ Հանգուցեալի՝ միլիօնաւոր մարդկանց մասին արտասանած խօսքերին տալիս են սիմվօլիկ նշանակութիւն. միլիօնաւոր մարդկային սրտեր ցնցվում են Տոլստոյի մահվան տեղեկութիւնից։ Համալսարանի րէկտօրը «Նէյէ-Ֆրէյէ-Պրեսսէում» գրում է. «Յանձին Տոլստոյի հանգաւ ռուսական մեծ, սլաւօնական մեծ, ժամանակակից մեծ բանաստեղծը։ Չը նայած որ Տոլստոյի յուզիչ մարդասիրութիւնը երբեւմ էր գերմանական ազգի վերաբերութեամբ, չը կայ ոչ մի գերման, որ չը մասնակցէ ռուսական ազգի և համայն սլաւօն ցեղի վշտին»։ (Հ. Գ.)

Բերլին, 8 նոյեմբերի

Երեկոյեան լրագիրները՝ բոլորը առանց բացառութեան՝ յօդուածներ են նուիրել Տոլստոյին իբրև մեծ գրողի. շատերը նոյնիսկ իբրև մեր ժամանակի խօսքի ամենամեծ գեղարուեստագէտի, սակայն տարբեր կարծիքներ են յայտնում Տոլստոյի մասին իբրև մտածողի և կուլտուրայի կրողի։ (Հ. Գ.)

Կիէվ, 8 նոյեմբերի

Համալսարանի պրօֆէսօրների խորհուրդը Տոլստոյի յիշատակը յաւերժացնելու համար որոշեց դադարեցնել պարապմունքները համալսարանում երկու օրով, մեծ դահլիճում դնել հանգուցեալի բիւստը, մրցանակ հաստատել նրա անունով գրական լաւագոյն աշխատանքի համար։ Պօլիտեխնիկումի ինստիտուտի պրօֆէսօրների խորհուրդը որոշեց պարապմունքները դադարեցնել երեք օրով, ֆօնդ հիմնել էժան գներով Տոլստոյի գրուածքները հրատարակելու և ժողովրդի մէջ տարածելու նպատակով, ինստիտուտում հիմնել թոշակաւորի տեղ հանգուցեալի անուան և ֆօնդ կազմել ուսանողներին օգնելու համար։ (Հ. Գ.)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿԻՆԸ ԵՒ ՆՐԱ ԱՊԱԳԱՆ*)

(Սօցիալ-տնտեսական էտիւդ)

—o—

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Պատմութեան էւոլիւնը. — Հին կարգերը. — Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնը. — Կանանց կոլլեկտիւ մասնակցութիւնը այդ յեղաշրջման մէջ. — Հետեւանքները։

—

Պատմութիւնը, որի մէջ ամփոփ կերպով պէտք է անդրադառնայ մարդկային հասարակութեան անցեալ կեանքը՝ յաջորդող փաստերի և երևոյթների պատճառական լուսաբանութեամբ, հիմք ունենալով սօցիալ-տնտեսական անխուսափելի ֆակտորները՝ իբրև գլխաւոր խթանիչ հասարակական կեանքի էվօլիւցիայի և նրա գաղափարական արտայայտման, ահա այդ պատմութիւնը ներկայ մօմենտում իր բովանդակութեամբ ոչ այլ ինչ է, եթէ ոչ մեծ մասամբ զանազան արքաների, կայսրների, պապերի և պատրիարքների ողորմելի կենսագրութիւնը։ Այդօրինակ պատմութիւնը, որ կրում է իր վրա դասական իդիալիզմի խորին կնիքը, կենտրօնական անձերին իրանց անհատական ձգտումներով ու գաղափարներով հանդիսացնում է այն օբյէկտները, որոնց անհատականութիւնից, կարծես, բղխելիս լինեն սօցիալ-տնտեսական երևոյթներն ու հասարակական յեղաշրջումները։ Այս կամ այն դեսպօտը, որ իբրև դրութեամբ բարձրացել է հասարակական բուրգի գագաթնակէտին՝ «անթիւ շատերի» բաղդի կարծես տէրն ու տնօրէնն է, կարծես այդ տիրանիան մարդկային կեանքի ինչ-որ ճակատագրի, ֆատումի մարմնացումն է. որի վերաբերմամբ նկատել են, թէ fata volentem ducunt, nolentem trahunt. Այսպէս ինչ հիմամբ բացատրել այն հանգամանքը, որ պատմութիւնը շրջանների բաժանվելիս՝ երևոյթների պատճառական բացատրութիւնը անխուսափելիօրէն կապված է լինում բռնակալի անհատական կեանքի, մասնաւոր ձեռնարկութիւնների, շարժումների հետ, ելակէտ ունենալով նրա անհատական կամքը... Ահա այս հիման վրա էլ՝ անկարելի էր անցեալ և ներկայ պատմաշրջանների նկատմամբ գրված պատմութիւններից սպասել միանգամայն անաչառ վերաբերմունք դէպի առհասարակ այն մասսայական էլէմենտները, որոնք մեծ առընչութիւն ունեն այս կամ այն յեղաշրջումների, հասարակական շարժումների հետ, առաւել մեծ առնչութիւն, քան տիրանը, դեսպօտը, մօնարխը և այլն, մի «առնչութիւն», որ հիմնովին տապալում, կործանում է վերջիններին... Սակայն իբրև պատմական փաստ, օրինակ, առաւել մեծ նշանակութիւն է տրվում դեսպօտի մասնաւոր ինտիմ կեանքի ամենամութ կողմերին, քան կանանց կոլլեկտիվ մասնակցութեանը յեղափոխական յախուռն շարժումների մէջ։ Այդ երևոյթի պատճառը անշուշտ պատմութեան իդէալիստական-անհատական հասկացողութիւնն է, որը կնոջ էութիւնը առհասարակ անարժէք, դատարկ է յայտարարած։ Մատերիալիստական հասկացողութեամբ սակայն պատմական փաստերի, երևոյթների փոփոխութեան մէջ՝ մասսայական էլէմենտը այն նշանաւոր դեկն է, որը արդիւնաբերութեան և արտադրված նիւթերի փոխանակութեան բազիսի վրա հիմնված՝ հասարակական-պատմական կարգերը հիմնականապէս տապալում, վերափոխում է, ըստ որում «պատմական-կենտրօնական» անհատը իր տիրական յատկութիւններով կամ իդէալական ձգտումներով՝ կարգերի հաստատման կամ տապալման մէջ՝ ընդունվում է իբրև մի վերին աստիճանի պասիվ տարր։

Հասարակական յեղաշրջումների մէջ կանանց ունեցած կոլլեկտիվ մասնակցութեան նկատմամբ պատմութեան լռութիւնը պիտի ընդհատվի այն մօմենտին, երբ կնոջ անհատականութիւնը ստրկացման, ճնշման խորութիւնից կը հանվի հասարակական կեանքի մակերևոյթի վրա, իսկ այդ ազատագրման և գնահատման պատմական ջատագովը սկսած XIX դարի երկրորդ կէսից հանդիսացել և հանդիսանում է «չորրորդ դասակարգի» իդէօլօգիան։ Եւ այդ իդէօլօգիայի ազդեցութեամբ է, որ վերջին ժամանակներս պատմական գրականութեան մէջ դեմօկրատ տարրերի ձեռքով կատարվում են մի շարք ուսումնասիրութիւններ, որոնք յեղափոխական շարժումների մէջ կնոջ մասնակցութեան փաստերը հետզհետէ հրապարակ են հանում, լուսաբանում։

Ներկայ պարագայում միանգամայն անհնարին համարելով մեր ներկայ աշխատութեան ծաւալում տեղաւորել պատմական այդօրինակ փաստերի արձանագրութիւնը և ընդգծելով, որ դա մեր ներկայ գործի շրջանակից դուրս է, ես առաւել նկատի ունենալով պատմական այդ երևոյթի բաղդատման և լուրջ ուսումնասիրութեան, ճշգրիտ լուսաբանութեան բացակայութիւնը,—յամենայն դէպս ասածներս առանց որևէ ապացոյցի չը թողնելու համար անհրաժեշտ ենք համարում համառօտ կերպով արձանագրել իգական սեռի մասսայական մասնակցութեան պատմական այն փաստերը, որոնք պէտք է զարդարեն ֆրանսիական մեծ յեղափոխութեան պատմութեան փայլուն էջերը։

Սուրխաթեան

(Կը շարունակվի)

ԱՐԳՈՒՄԵՆՏ

(Իւրիյ Ժուլավսկիից)

—

Նրա գնալուց յետոյ երկար ժամանակ ես չէի կարողանում հանգստանալ։ Շարունակ քայլում էի սենեակումս ու մտածում նրա ասածների մասին։ Նա ինձ համոզեց՝ չը նայած ամեն կերպ աշխատում էի չենթարկվել նրա համոզմունքներին։

Այո, այո, նա իրաւացի է։ Ինչու համար խաբենք մեզ. մահը անխուսափելի, վախճանական կէտն է, իսկ մեր ցնորքները հոգու, անմահութեան, անդրշիրիմեան երանութեան մասին՝ բոլորը լոկ ցնորքներ են և ուրիշ ոչինչ...

Ես աշխատում էի մտքումս գտնել որևէ պերճ ու համոզեցուցիչ ապացոյց՝ նրան հակադրելու, սակայն ի զուր... Նա կործանեց, ջարդ ու փշուր արաւ հաւատս, ու ես չէի կարողանում հանգստանալ։

Ես նայեցի նրան։ Նա բազկաթոռի վրա բազմած հանգիստ կերպով ինչ-որ ձեռագործով էր զբաղված, ճիշդ այնպէս, ինչպէս և այն ժամանակ, երբ նա իր խորունկ ու համարձակ մտքերն էր արտայայտում, որոնք յուզում, ալեկոծում էին ինձ։

Նրա դէմքի վրա յուզմունքի ու կռւի հետք անգամ չը գտայ...

— Հասկացա՞ր, արդեօք, թէ ինչ ասաց նա,—հարցրի ես նրան։

— Հասկացայ,—հանգիստ կերպով պատասխանեց նա։—Նա ապացուցանում էր, որ այն կեանքում չը կայ ոչ անմահութիւն և ոչ հատուցում։

— Իսկ դու ինչ կասես այդ մասին։

— Ոչինչ։ Ճիշդ չէ։

— Ճիշդ չէ՞։ Իսկ դու ունե՞ս որևէ ապացոյց, որ այդպէս չէ։

— Ունեմ։

Այս ասելով նա նայեց պատից կախված նկարին։ Մի վայրկեան սիրով դիտեց ծերունի գեղեցիկ ու ազնիւ դէմքը, ժպտաց և ապա խոր համոզման շեշտով ասաց.

— Տեսնում ես, հայրիկը մեռել է, թէև նա այնպէս բարի էր։ Նշանակում է՝ նա այժմ երկնքումն է, Աստուծու մօտ։ Ապա ինչպէս թէ չը կայ ոչ անմահութիւն և ոչ հատուցում։

Վիկտոր Մանուէլեան

---

*) Տես «Մշակ» № 247.

Սմոլէնսկ, 8 նոյեմբերի

Դուման, յարգելով Տօլստոյի յիշատակը ոտքի կանգնելով, որոշեց դումայում և դպրոցներում կախել Տօլստոյի պատկերը, մի դպրոց անուանել նրա անունով, դրամագլուխ կազմել հանգուցեալի յիշատակը յաւերժացնելու համար։ (Հ. Գ.)

—

Գորբաչէվօ, 8 նոյեմբերի

Կայարանում սգագնացքը գիշերեց։ Գնացքը կը մեկնէ առաւօտեան ժամը 5-ին։ (Հ. Գ.)

ԼԵՒ ՏՕԼՍՏՈՅԻ ՄԵԿՆՈՒՄԸ ԵԱՍՆԱՅԱ-ՊՕԼԵԱՆԱՅԻՑ

Մոսկվա, 1 նոյեմբերի

> Какъ истый христіанинъ, я на склонѣ дней своей жизни ухожу изъ міра.
>
> Л. Н. Толстой

Ներկայումս ռուսաց մամուլի ուշադրութիւնը կենտրոնացած է այն խոշոր երևոյթի վրա, որ նորերս տեղի ունեցաւ երկրի գրական հասարակական կեանքում։

Յայտնի է, որ հոկտեմբերի 28-ին, Լեվ Տօլստոյը առանց իր հարազատներին յայտնելու, բոլորովին յանկարծակի կերպով մեկնեց Եասնայա-Պօլեանայից իր սիրելի բարեկամ բժիշկ Դ. Պ. Մակովեցկիի հետ միասին։

Վաղ առաւօտեան, ժամը 5-ին, հեռանալով իր մշտական վայրից, նա թողել է մի նամակ, ուր ի միջի այլոց ասում է, որ կեանքի վերջին օրերը նա կամենում է անցկացնել միայնակութեան մէջ՝ հեռու կեանքի ժխորից, թէև մեծ գրողը տասնեակ տարիներ մեկուսացած կեանք է վարել մի փոքր և յետ ընկած գիւղում, որպիսին Եասնայա-Պօլեանան է։

Գրական մտքի այդ հանճարեղ տիտանը, մեծ փիլիսոփան, աշխարհահռչակ այդ գրողը յայտարարում է, որ ինքը ձանձրացած կեանքի վայելքներից՝ թողնում է ամեն ինչ, բոլորին, նոյնիսկ իր սիրելի ամուսնուն՝ Սօֆիա Անդրէեվնային, իր հարազատներին...

Նա իր թողած նամակի մէջ խնդրում է չը փնտռել իրան, որովհետև նա այլևս չէ վերադառնալու իր ընտանեկան օջախը՝ Եասնայա-Պօլեանա։ Նա մինչև իսկ ոչինչ չէ ասում այն մասին, թէ ո՞ւր է գնում, ինչո՞ւ այդ մասին նախօրօք չէ յայտնել իր մերձաւորներին...

«Ռուս երկրի մեծ գրողը» խնդրում է չը փնտռել իրան, բայց նա մոռանում է, որ դա անկարելի բան է ոչ միայն իր հարազատների համար, այլև, որ աւելի թանգագին է, իր մայրենի գրականութեան, ռուս ժողովրդի համար, որ տուել է Տօլստոյի նման հանճարեղ, աշխարհահռչակ գրող։ Եւ ռուսաց մամուլը, քայլ առ քայլ հետևում է նրա կեանքի ամեն մի շարժումին. այն մամուլը, որ զբաղւում է մեծ գրողի ուտել-խմելով անգամ, պարզ և բնական է, որ զբաղւի Տօլստոյի «կեանքի հրաժարիմքի» նման ծանրակշիռ խնդրով։ Եւ ահա, մամուլի տուած տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Տօլստոյը միայն 38 րուբլի ունենալով գրպանում՝ իր բժշկի հետ մեկնում է դէպի Կալուգայի նահանգի Կօզելսկ քաղաքը, որտեղից ուղղակի դիմում է Օպտին մենաստան հիւրանոցը, ուր դիմելով հայր Միխայիլին ասել է.

— Մի գուցէ իմ այցը անհաճելի է ձեզ։ Ես չէ՞ որ եկեղեցուց բանադրված Լեվ Տօլստոյն եմ...

— Մենք ուրախ ենք բոլոր այցելուների համար,—պատասխանել է հայր Միխայիլը։

Այդտեղ Տօլստոյը այցելում է աբեղայ Յովսէփին, որի հետ երկար զրուցում է զանազան կրօնական հարցերի մասին։

Միւս օրը Տօլստոյը հեռանալով Օպտին վանքից՝ հիւրանոցի գրքի մէջ գրում է. «Լեվ Տօլստոյը շնորհակալութիւն է յայտնում ընդունելութեան համար»։

Ապա Տօլստոյ շարունակելով իր ուղին՝ գալիս է 12 վերստ հեռաւորութեան վրա գտնվող Շամարդինի կանանց վանքը, ուր կոյսերի թիւը հասնում է 500 հոգու, որոնց թւումն է նաև հանճարեղ գրողի քոյրը։

Այստեղ, ինչպէս թերթերը հաղորդում են, Տօլստոյը մշտական բնակութիւն է հաստատելու իր քրոջ մօտ։

Խիստ ուշագրաւ է այն, որ Ամվրօսիի ձեռքով հիմնված այս վանքը խոշոր դեր է խաղացել մի շարք ռուս գրողների կեանքում։ Դոստոևսկի, Գոգոլ, Ապուխտին, Լեօնտիեվ, կոմս Ա. Տօլստոյ, Ի. Կիրեևսկի և այլ ականաւոր գրողներ յաճախ իրանց կեանքի խաղաղ և անդորր րոպէները գտել են մեկուսացած այդ վանքի մէջ։ Հէնց ինքը Տօլստոյը 3 անգամ եղել է այդ վանքում։

Այսպէս թէ այնպէս Տօլստոյի բնակութեան տեղը այժմ յայտնի է ամենքին։

Ներկայումս ռուսաց մամուլի ուշադրութիւնը բևեռված է Տօլստոյի գործած այդ նոր քայլի վրա։ Հասարակական զանազան խաւերն ևս շուարած և յուզված այդ երևոյթի ազդեցութեան տակ՝ մեծ ուշադրութեամբ հետևելով նրա ամեն մի ընթացքին՝ անհամբեր կերպով սպասում են նրա վախճանին, նրա ֆինալին։

Այժմս մի հարց։

Տօլստոյը իրաւունք ունէ՞ր այդպէս վարվելու, կամ նա իսկապէ՞ս որ չէ վերադառնալու Եասնայա-Պօլեանա։

Ահա այս հարցերն են, որ շարունակում են զբաղեցնել մամուլը, հասարակական լայն խաւերը։ Պէտք է շեշտել, որ ներկայումս երկու տարբեր կարծիք է տիրում այդ հարցի շուրջը։ Ոմանք պնդում են, որ Տօլստոյը շուտով տուն կը վերադառնայ, իսկ ոմանք էլ, գլխաւորապէս տօլստոյականները, այն կարծիքի են, որ իրանց մեծ ուսուցչի վարմունքը միանգամայն բնական և հասկանալի է։ Լեվ Տօլստոյը վարվել է միանգամայն լօգիկ կերպով, և նրա գործած այդ նոր քայլը բղխում է այն անհրաժեշտութիւնից, որի կարիքը վաղուց զգալի էր հանճարեղ գրողի համար։

Դեռ 20 տարի առաջ, երբ դուխոբորները պատրաստվում էին գաղթել Ամերիկա, Տօլստոյն ևս ցանկացաւ թողնել իր հայրենիքը և նրանց հետ գնալ Ամերիկա. բայց մեծ գրողի մերձաւորներին կարելի եղաւ համոզել նրան, որ նա այդպէս չը վարվի, կարողացան նրան յետ կասեցնել այդ մտքից։ Վերջին տարիներն ևս նա շարունակ պնդելիս է եղել, որ ինքը կամենում է իր կեանքի վերջին օրերը անցկացնել միայնակութեան մէջ, հեռու նոյնիսկ... իր հարազատներից, իր սիրելիներից...

Ուրեմն պարզ է այստեղից, որ Տօլստոյն իր այդ վարմունքով ի կատար է ածում իր վաղուցվայ իղձը միայն, իր բուռն ցանկութիւնը...

Տօլստոյը, իբրև 82 տարեկան ծերունի, կարիք ունի, անշուշտ, հանգստի։ Հանճարեղ այդ գրողը, որ արդէն շատ բան է արել մարդկութեան համար, իրաւունք ունի պահանջելու, որ բոլորովին հանգիստ թողնեն նրան։ Չը պէտք է մոռանալ, որ Եասնայա-Պօլեանան վերածված էր կատարեալ Մեկկայի, ուր ուխտաւորներ մշտական լինում էին։ Հարկաւոր էր, վերջապէս, որ մի օր պատմական այդ ուխտատեղին փոխարինվէր սովորական տան. պէտք էր, կարծում եմ, վերջ դնել այն անախորժութիւններին, որ յաճախ անհամար այցելուները պատճառում էին նրան։ Եւ նա երկար խորհելուց յետոյ եկել է այն եզրակացութեան, որ հարկաւոր է թողնել իր ընտանեկան օջախը։ Նա այդպէս էլ վարվել է. այլ կերպ վարվել մինչև իսկ անկարող էր նա։

Հետևողական լինելու համար պէտք է որ հանճարեղ Տօլստոյը չը վերադառնայ Եասնայա-Պօլեանա, մի բան, որ պնդում են նրա վարդապետութեան առաքեալները, մամուլի շատ օրգաններ, ինչպէս օրինակ Բրիւսսելում հրատարակվող «Petit Bleu» օրգանը և այլն։

Ամենայն դէպս մնում է սպասել մօտ ապագային, որ իրերի դրութիւնը կը պարզաբանէ իր բոլոր մանրամասնութիւններով։

Ոսկու-Ջօն

ԼԵՎ ՏՕԼՍՏՈՅԻ ՅԻՇԱՏԱԿԸ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅՈՒՄ

Պետերբուրգ, 8 նոյեմբերի

Նախագահում է Գուչկովը։ Յայտարարելով նիստը բացված, ասում է. «Պարոններ, երէկ մեռաւ մեր ընկեր, Դումայի անդամ հայր Զլատոմրեժեվը։ Առաջարկում եմ նրա յիշատակը յարգել ոտքի կանգնելով»։ Բոլորը կանգնում են։

Յետոյ նախագահը դիմում է Դումային հետևեալ խօսքերով. «Մեր հայրենիքը ծանր վիշտ է անցնում. մեռաւ կոմս Լեվ Նիկոլայեվիչ Տօլստոյը, մեծ մտածող, մեծ գեղարուեստագէտ-հանճարը, որ Ռուսաստանի պարծանքն էր և համուր մարդկութեան փառքը։ Թող Տէրը արքայութեան դռները բանայ նրա առաջ։ Առաջարկում եմ նրա յիշատակը յարգել ոտքի կանգնելով և ի նշան մեր խորին ցաւակցութեան ընդհատել մեր պարապմունքները այսօր»։

(Բոլորը կանգնում են, բացի մի քանի ծայրայեղ աջակողմեաններից)։

«Քուէարկութեան եմ դնում պարապմունքները դադարեցնելու առաջարկութիւնը»։

Զամըսլովսկին խօսք է խնդրում. ձայներ ձախից՝ «վիճաբանութիւններ թոյլ մի տաք. քուէարկեցէք»։

Զամըսլովսկի.—Ես առարկում եմ այդ առաջարկութեան դէմ և գտնում եմ, որ Տօլստոյի յիշատակը չը պէտք է յարգել ոտքի կանգնելով։ Իմ կարծիքները բաժանվում են երկու կաթէգորիաների—ձևական և ըստ էութեան։ Ձևականօրէն ես գտնում եմ, որ մտածողների, նկարիչների, արտիստների և ուսումնականների մահը, անկախ նրանց նշանակութիւնից և տաղանդաւորութիւնից, չը պէտք է ընդհատէ Դումայի պարապմունքները. եթէ կամենում են յարգել այդ մարդկանց, կարող են անել ուրիշ ճանապարհով, և ոչ թէ Դումայի պարապմունքները խզելով, որոնք անհրաժեշտ են երկրին (ձայներ աջից «ճիշդ է»)։ Այդպիսի են ընդհանուր-ձևական հայեացքները։ Բայց բացի դրանից կան աշխարհահայեացքներ և ըստ էութեան, որոնք վերաբերում են ներկայ դէպքին. Տօլստոյը վերջին ժամանակս ժխտում էր եկեղեցին, պետութիւնը, ընտանիքը, սեփականութիւնը։ Նա ժխտում էր այն ամենը, ինչ որ մենք իբրև պետական հաստատութիւն պէտք է պահպանենք և պաշտպանենք։ Տօլստոյի գործունէութիւնը վերջին տարիները կործանիչ էր, մեր գործունէութիւնը պէտք է լինի ստեղծագործական (ծափեր աջից)։ Նա մեռաւ եկեղեցուց բաժանված դրութեան մէջ։ Եկեղեցին հրաժարվեց թաղել նրան և նրա յիշատակի յարգումը այստեղ կը լինի մի տեսակ մարտակոչ եկեղեցուն (ձայներ աջից՝ «ճիշդ է». ձայներ կենտրոնում՝ «սխալ է»)։ Կը լինի մի քայլ՝ ուղղված անջատելու եկեղեցին պետութիւնից... Ես գիտեմ, որ դրան շատերն են ձգտում Պետական Դումայում, սակայն մենք կռւել ենք դրա դէմ և կը շարունակենք կռւել։ Դարձեալ մի կարևոր կէտ. Դուման պետական հաստատութիւն է, որի համար և կոչվում է. պետական»։ Տօլստոյը բացասում էր պետութիւնը և պետական հաստատութիւնները. մասնաւորապէս նա բացասում էր Պետական Դուման. յարգել պետական հաստատութեան մէջ մի մարդու յիշատակը, որ այս հաստատութիւնը չէ ընդունում, ես համարում եմ ինքնաժխտում (ձայներ աջից՝ «ճիշդ է»), ես գտնում եմ բոլորովին անթոյլատրելի, տրամաբանօրէն անմիտ բան, ուստի և ես նրա դէմ բողոքում եմ (ծափեր աջից, սուլոց ձախից)։

Նախագահ.—Պարապմունքները այսօր ընդհատելու առաջարկը դնում եմ քուէարկութեան։

Առաջարկութիւնը ընդունվեց ամբողջ Դումայից ընդդէմ ծայրայեղ աջակողմեանների և մի քանի նացիօնալիստների։

Նիստը փակված է։

Հոկտեմբերեանների ֆրակցիան յանձնարարեց Անրէպին, Ռօձեանկոյին և կոմս Կապնիստին միջնորդել մինիստրների խորհրդի նախագահի և միտրոպոլիտ Անտոնիի առաջ՝ թոյլ տալու հոգեհանգիստներ կատարել Տօլստոյի համար։

Դումայի նիստից յետոյ բոլոր ֆրակցիաներում տեղի ունեցան խորհրդակցութիւններ՝ նուիրված Տօլստոյի յիշատակին։

Հոկտեմբերեանները, մահմէդականները, սօց.-դեմօկրատները և աշխատաւորականները կոմսուհի Տօլստոյին ուղարկեցին ցաւակցական հեռագիրներ։ Առաջադիմականները և կադէտները որոշեցին Եասնայա-Պօլեանա ուղարկել իրանց ներկայացուցիչներին՝ թաղմանը ներկայ լինելու համար։ Կադէտները՝ բացի դրանից՝ վճռեցին պնդել, որպէսզի նոյեմբերի 12-ի նիստում ընդունվի այն օրինագիծը, որով առաջարկվում է Տօլստոյի թաղումը կատարել պետութեան հաշւով և նրա մահվան օրը յայտարարել ազգային սգի օր։ Ծայրայեղ աջակողմեանները Դումայի նախագահին բողոք ներկայացրին, որ նա թոյլ տուեց յարգել Տօլստոյի յիշատակը ոտքի կանգնելով և դադարեցնել Դումայի պարապմունքները։ (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 8 նոյեմբերի

Արտաքին գործերի մինիստրութեան կառավարիչ Սազօնովը նշանակվեց մինիստր։ (Հ. Գ.)

—

Բերլին, 8 նոյեմբերի

Նոյեմբերի 7-ին հաստատվեց գերմանական մամուլի պետական միութիւն, որ նպատակ ունի ի մի միացնել բոլոր խմբագիրներին և ժուռնալիստներին պրոֆեսիօնալ և նիւթական շահերի հողի վրա։

«Դէյտշէ-Կաբէլ-Գրամ.»-ին հեռագրում են Կալկաթայից, որ այնտեղ եկած նոր փոխարքայ Հարտինգին ցոյց են տուել հանդիսաւոր ընդունելութիւն։ (Հ. Գ.)

—

Լոնդօն, 8 նոյեմբերի

Լորդերի պալատում Լէնսդօունը հարց բարձրացրեց՝ յետաձգել veto-ի իրաւունքի շուրջը սկսված վիճաբանութիւնները մինչև վաղը և յայտարարեց, որ այսօր երեկոյեան կը ներկայացնէ բանաձևեր, որոնցով ցոյց կը տրվեն ելակէտներ արդի կացութիւնից։

Ներքին գործերի մինիստրը չը յարգեց Կրիպպէնի միջնորդութիւնը ներումն շնորհելու մասին։ Մահապատիժը կը կայանայ նոյ. 10-ին։ (Հ. Գ.)

—

Պարիզ, 8 նոյեմբերի

Ժիւլ Ֆէրրիի արձանի օծումից յետոյ, երբ Բրիանը մեկնեց Տիւլէրից, նրա վրա յարձակվեց՝ բռունցքները բարձրացրած՝ կամէլօ-դիւ-րօա կազմակերպութեան անդամ Լակուրը։ Բրիանը յետ քաշվեց։ Լակուրը բռունցքով զարկեց Բրիանի գլխարկին։ Գլխարկն ընկաւ։ Ամբոխը բռնեց Լակուրին, միայն շնորհիւ Բրիանի միջամտութեան չենթարկվեց ծեծի։ Բրիանը պատմում էր, որ յարձակվողը նրա վրա թողնում էր խելագարի տպաւորութիւն։

Լակուրը Պարիզի հիւսներից է և անդամ է կամէլօ-դիւ-րօաի գլխաւոր կօմիտէտի։ Ոստիկանատանը նա յայտնեց, որ Բրիանի անձի դէմ ոչինչ չունի, բայց նա դէմ է Բրիանի մարմնացրած այժմեան ռէժիմին և կամենում էր յանձին Բրիանի հարուած հասցնել հանրապետութեանը։ Երբ Բրիանը միջադէպից յետոյ կառք էր նստում, ամբոխը աղաղակում էր՝ «Կեցցէ՛ Բրիանը, կեցցէ՛ հանրապետութիւնը»։

«Մատէնի» թղթակիցը Բեռլինից հեռագրում է, որ 2 ամիս առաջ վերականգնած պայմանագրի մէջ, որ կապում է Իտալիան Աւստրիայի և Գերմանիայի հետ, վերջիններս սահմանափակել են քաղաքական ու առևտրական ազդեցութեան շրջանը Բալկաններում. Իտալիային տրված են Չերնօգօրիան և Ալբանիան, Աւստրիային՝ Մակէդօնիան մինչև Սալօնիկ։ (Հ. Գ.)

—

Մեկսիկա, 8 նոյեմբերի

Ցեկեատէգասում շաբաթ օրը տեղի ունեցան անկարգութիւններ։ Զօրքերը կրակում էին ապստամբների վրա։ 100 մարդ սպանվել են. դիակները մինչև օրս ընկած են փողոցներում։ Այժմ կարգը վերահաստատված է։

Պատրաստվող ապստամբութիւնը չիրականացաւ, բայց և այնպէս կառավարութիւնը ձեռք է առել պաշտպանողական արտակարգ միջոցներ։ (Հ. Գ.)

—

Բրիւսսէլ, 8 նոյեմբերի

Բելգիական թագուհին հիւանդացաւ ինֆլուէնցիայով, որ բարդացել է բրօնխիտով և պլէվրիտով։ Հիւանդութիւնն առ այժմ ընթանում է նորմալ։ (Հ. Գ.)

—

Պետերբուրգ.—Սօցիալ-դեմօկրատները և մահմէդական ֆրակցիան Պետական Դումային հարցապնդում ներկայացրին այն միջոցների մասին, որ ուղղված են ձերբակալելու աւազակ Զելիմ-խանին։

Փաստաբան Պետրօսեանցը իր կլիէնտների փողերը իւրացնելու համար դատապարտվեց $1^1/_2$ տարով բանտարկութեան։ («Б.»)

—

Սալօնիկ.—Գօլց-փաշան մեկնեց արտասահման զինելու բօլգարական ամրութիւնները։ Բօլգարիայում յուզմունք է տիրում։ («Б.»)

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Կ. Պօլիս, 8 նոյեմբերի

Մայրաքաղաքում մի շաբաթում խօլերայով հիւանդացան 164, մեռան 89 մարդ. համաճարակի սկզբից հիւանդացել են 440, մեռել են 252 հոգի։ (Հ. Գ.)

—

Վիէննա, 8 նոյեմբերի

Տեղս գտնվող ռումինական նախկին մինիստր-նախագահ Կարպը, որ այցելեց Էրէնտալին, ունենալու է նրա հետ երկրորդ անգամ տեսակցութիւն։ Նա հաղորդեց «Նէյէ-Ֆրէյէ-Պրէսսէի» աշխատակցին, որ զինուորական դաշինք Թիւրքիայի և Ռումինիայի միջև գոյութիւն չունի։ «Սակայն բոլորովին պարզ է,—ասաց Կարպը,—որ միջազգային որևէ բարդութեան դէպքում Ռումինիան կը կանգնէ եռապետեան դաշնակցութեան կողմը, Թիւրքիայի հետ միասին, կը կռւէ միայն խոշոր միջազգային ընդհարման դէպքում։ (Հ.Գ.)

—

Սօֆիա, 8 նոյեմբերի

Կ. Պօլսից հաղորդում են, որ տիեզերական պատրիարքի և բուլգարական էկզարխատի խուլ բանակցութիւնները փոխադարձ հաշտութեան մասին վերջին ժամանակներս ստացել են նպաստաւոր ընթացք և վարվում են մեծ եռանդով։ Սպասում են, որ էկզարխին կայցելեն յոյն պատգամաւորները։ Հետևելով յոյն-բօլգարական քաղաքականութեան ընդհանուր ուղղութեան, որ ձգտում է համաձայնութեան, պատրիարքարանը պատրաստ է ճանաչել բօլգարական եկեղեցու անկախութիւնը։ Մնում է լուծել բօլգարական էկզարխի հոգևոր իրաւասութեան իրաւունքների էական հարցը Թիւրքիայի սահմաններում, որի դէմ միշտ էլ հակառակել է պատրիարքարանը։ Բայց այժմ հիմք կայ նպաստաւոր որոշում սպասելու։ Յոյները և բօլգարները միատեսակ զգացել են լիակատար փոխ-ազդեցութեան անհրաժեշտութիւնը՝ ի նկատի ունենալով երիտասարդ-թիւրքերի նեղ նացիօնալիզմը։ (Հ. Գ.)

—

Թաւրիզ, 8 նոյեմբերի

Ենգէլիի ճակատամարտում մասնակցում են շիկակ ցեղի բոլոր կռւողները և ասունջեան շինականները մի կողմից, կառավարական ձիաւոր-սարբազները, Ղարաբաղ և Նազլուչայ շրջանների գիւղացիները՝ միւս կողմից։ Կառավարութեան շինական կողմնակիցներին ղեկավարում է յայտնի հաջի Նագիմը։ Վերջինս տեղեկացնում է, որ քիւրդերի հրամանատարներն են թիւրքեր։ (Հ. Գ.)

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պօլիս, 29 նոյեմբեր

Մեծ ոգևորութիւն ժողովրդային խաւերու մէջ. մեծ մասը իր համակրանքը կը յայտնէ Դուրեան պատրիարքի համար, ուրիշներ իրենց երախտագիտութիւնները կը տանին վարչութեան։ Առաջինները կը փափագին, որ Դուրեան չթողու պատրիարքական աթոռը, լռելեայն ուզելով հասկցնել որ վարչութիւնը, իր պայմանաժամը լրացուցած, հեռանայ անդարձօրէն. միւսները կը փափագին, որ վարչութիւնը, իբրև թէ օրինական, տարի մըն ալ շարունակէ իր պաշտօնը, ուզելով միևնոյն ատեն հասկցնել, որ Դուրեան ալ չդառնայ պատրիարքական աթոռ։

Այս երկու հոսանքներու մէջ եթէ, առանց տարուելու կրքի փոթորիկներէ, ուզենք իրաւացի կէտեր գտնել, անշուշտ իրաւունք պիտի տանք անոնց, որոնք պատրիարքին համակրողներ են։ Այդ կէտը այնքան բացորոշ է, որ շատ ծիծաղելի պիտի ըլլար վարանիլն անգամ։ Բացարձակապէս պէտք է համոզուիլ, որ իբրև պատրիարքացու յեղյեղուած անուններուն մէջ, որոնց գլխաւորն է Տրդատ եպ. Պալեան, դժբաղդաբար ոչ ոք ունինք, որ Դուրեան պատրիարքի համեմատուի փոքր ի շատէ։ Օրմանեանի համար, ինչպէս գրուած է, հնարաւորութիւն չկայ. Արշարունի եպիսկոպոսը, երբեմն տեղապահ, ինք բացէ ի բաց յայտարարեց ժամանակին, թէ ջղային է. Նիկոմիդիոյ առաջնորդին անունը չի լսուիր արդէն։ Կը մնայ Տրդատ եպիսկոպոս, ան՝ որ չէր կրցած նոյն իսկ, իր առաջնորդական պաշտօնով, գոհացնել իր Թեմի ժողովուրդը Կեսարիոյ մէջ և տարիներով նստած էր վանքի մը մէջ, իբրև թէ դպրոց մը վարելու, իր գլուխը ժողվելով ուսուցչական թափթփուկներ։

Կեսարիայէն ամբաստանուած դուրս նետուելէ ետքը, մեր վարչութիւնը, իբրև օժանդակ եպիսկոպոս, ղրկեց զանի Երուսաղէմ, յոյս ունենալով թէ, իբրև երբեմնի սաղիմական, որով և գիտակ միաբանական նենգութեանց ու մեքենայութեանց, կարող պիտի ըլլար իր ընդունակութիւնները ցոյց տալ։ Բայց ինչ ընդունակութիւն. թանձրամիտ տգէտի մը բացասական շնորհքներովը երևան եկաւ. ոչ վարչական, ոչ տնտեսական, ոչ վանքական շնորհներ տեսնուեցան իր վրայ։ Ու ինչ կուզենք այսօր. բարձրացնել պատրիարքական աթոռ։ Այս կարգի անտեղութիւններ կրնան պատահիլ, անշուշտ, Պօլսի մէջ միայն և ոչ ուրիշ տեղ։ Ճիշդ թիւրքական ըմբռնումներ։

Սա ճիշդ է, որ ինչ ալ ընենք, սահմանադրութիւնով չափաւորուած են պատրիարքական իրաւասութիւնները։ Պատրիարք մը, այսուհետև, չպիտի ունենայ միապետական գործունէութիւններ ու անպատասխանատու վիճակ, ինչպէս եղած էր Համիդի օրով։ Բայց հարկ չէ՞ որ աթոռին վրայ գտնուին այնպիսիներ, որոնք խելք ունենան գոնէ վնասակար չըլլալու ազգին։

Դուրեանի համակրողները սա համոզումը ունին, որ ո՛չ միայն հասկցող է, այլ գերազանցօրէն մաքուր մարդ. լաւ, գործօն վարչութեան մը հետ միշտ պիտի միայ ազնիւ գործիչը։ Իր 17-ամսեայ պաշտօնավարութեան շրջանին մէջ՝ համաձայն քալեց իրեն գործակից ժողովներու հետ։ Ստոյգ է, որ ազգ. բոլոր իշխանութիւնները արդիւնաւոր գործունէութիւն ցոյց չտուին ցարդ, ու ատ ալ ունեցաւ իր ներքին պատճառները։

Ատով է, որ Դուրեանի պատրիարքութիւնը նախապատիւ կը համարուի մտաւոր շրջաններու մէջ։ Ատոնց հետ զուգընթաց կերթան գաւառական համակրանքները. ամեն կողմէ համակրալից հեռագիրներ կը տեղան։

Զախորդ մտածութիւն մը, տիրող մեր վարչական շրջանակներու մէջ, մուտ գտած է ժամանակէ մը ի վեր, և սա է՝ ոստիկանական հսկողութեան ներքև գործել։ Եթէ անպատուութիւն չհամարենք, պատիւ ալ չէ սակայն։ Ներքին անհամաձայնութիւններ, գժտութիւններ պատահած են միշտ. ատ պատճառ մըն է, որ ազգին պատգամաւորական ժողովը իրեն պատիւ համարի դռնփակ նիստեր կազմել՝ հեռու զինքը ընտրող ժողովուրդէն, որուն շնորհիւը ստացած է այդ իրաւունքը։ Այդ դրութիւնը սա կասկածը տուած է հանուրին, որ իր քուէներովը ընտրուած պատգամաւորական ժողովը դադրած է վստահելի ըլլալէ ժողովրդային շահերու ըմբռնումով։

Պէտք է գիտնալ, որ եթէ ասկէ առաջ նախատինքներ տեղացին ժողովրդային հոսանքներէ պատգամաւորական ժողովի քանի մը անդամներու, այդ անպատեհութիւնը տեղի ունեցաւ այն ատեն, երբ խմբագրուած հանրագրութիւններ սկսան երևան գալ, երբ ընդհանուր ժողովի նիստերը դռնփակ հրատարակուեցան։

Այժմ կըսուի, թէ պէտք չէ, որ հանրութիւնը հետաքրքրուի իր պատգամաւորներու նիստերովը, պէտք է վստահի անպայման, քանի որ իր քուէներովը պատուած է իր պատգամաւորները։ Իսկ, այդ մասին, կառարկուի. ինչպէս ասկէ առաջ, այսուհետև ժողովին նիստերը պէտք է բաց ըլլան հետաքրքիրներու առջև. պիտի տեսնենք մեր պատգամաւորներու բոլոր շարժումները. պիտի լսենք զիրենք. պիտի դատենք ու վճռենք, թէ ինչ կարժեն անոնք անհատաբար ու հաւաքաբար։

Ժողովուրդէն շատ աւելի դատապարտելի է ինքը՝ երեսփոխանութիւնը։ Ո՛չ մէկ ատեն ուզեց հարցերով զբաղիլ. տարուեցաւ թերթերու շահասիրական կռիւներէն. տարուեցաւ կողմնակի դրդումներէ։ Այն օրը, որ քիչ մը խելքի գայ, կիրքերէ աւելի՝ միտքերէ մղուի, այդ օրը կը դադրի կասկածելի ըլլալէ, ու կը շրջապատուի համակրանքով։ Գուցէ զարմանալի թուի «Մշակի» ընթերցողներուն, բայց ոչ հաւատացէք։ Մեր ժողովուրդը իր պատգամաւորներու նեղմիտ, կրքոտ ըմբռնումներէն շատ վեր կը մնայ։ Շահէն

Ի լրումն Կ. Պոլսի մեր Թղթակից Շահէնի՝ «Մշակում» լոյս տեսած երէկվայ և այսօրվայ նամակների, որոնց մէջ ծեծվում է Դուրեան պատրիարքի և ազգ. կենտր. վարչութեան հրաժարականների խնդիրը, մենք հարկ ենք համարում ստորև զետեղել և ազգ. կենտր. վարչութեան և սրա ատենապետ դոկտ. Ս. Սեղբոսեանի առանձին-առանձին ներկայացրած հրաժարագրերի պատճէնները, քաղելով Կ. Պոլսի հայ Թերթերից.

1) Ազգ. կենտր. վարչութեան հրաժարականը

«Ամենապատիւ սրբազան պատրիարք հայր, Նախագահ ազգային ընդհանուր ժողովոյ.

«Մինչդեռ ազգային կեդրոնական վարչութիւնը ջանադիր կը լինի, որքան կը զօրեն միջոցները, ըստ կարի գոհացում տալու ազգին այլազան կարօտութեանց և պէտքերուն և հնարելու դարմանն իրաց այն դառն վիճակին, որ յառաջ եկած է անցեալ աղէտալի դէպքերու հետևանքով, մինչդեռ այսպիսի դժուարին կացութեան մը մէջ անհրաժեշտ է, որ մեր ներքին խաղաղութիւնն ու սահմանադրական կարգն ու կանոնը պահուին անվթար և յարգանք ընծայուի ազգային իշխանութեան տնօրինութեանց, միւս կողմէ ազգ. վարչութիւնը ոչ նուազ ցաւով կը տեսնէ, որ դառն փորձեր կը փորձուին սանձ՝ ազգին բարոյական իշխանութեան ուժը ջլատելու, ինչ որ վտանգ կը սպառնայ անոր էութեան ու սահմանադրութեան, յարձակումներ կը գործուին՝ ազգային վարչական ժողովներու անդամներու դէմ՝ իրենց պաշտօնին կիրառութեան միջոցին, ուսանողութեան մէջ անկարգապահութեան ոգին, որ այնքան վնասաբեր է իրենց զարգացման, կը քաջալերուի, սահմանադրական ընտրութեանց առթիւ ընտրողական ժողովներու դէմ ճնշումներ կը գործադրուին, և կարգիլուի ժողովրդեան վայելել քուէարկութեան ազատութիւնը, գաւառներու մէջ, առաջնորդարաններու և տեղական վարչութեանց դէմ բռնական արարքներ տեղի կունենան, որոնց պատճառով մեր ազգային գաւառական պաշտօնակալք անհնարութեան մատնուած կը տեսնեն զիրենք պաշտօն վարելու և կը սպառնան գործէ ձեռնթափ ըլլալ իսպառ, և վերջապէս ամէնուրեք նոյն ծայրայեղութիւնք, սխալ ըմբռնուած ազատութեան և օրինաւորութեան անունով, ինչ որ պատճառ կը դառնայ ընդհանուր լքում մը յառաջ բերելու։

«Ազգային սահմանադրական վարչութեան հիմն արդարութեան սկզբունքն է, և իր ույժը ձայնից բազմութեան մէջ կը կայանայ, որ օրինաւորութեան սկզբունքն է, ինչպէս կը հռչակէ սահմանադրութիւնը։

«Ազգային վարչութիւնը կոչուած է գործադրել և յարգել տալու օրէնքն և այս հիմնական սկզբունքները, սակայն երբ չընծայուիր անոնց պէտք եղած յարգանքը և բազմութեան ձայնին տեղ կը սկսի տիրապետել անհատներու կամքն ու քմահաճոյքը, ազգային վարչութիւնը, որ իր պարտուց գիտակցութիւնն ունի և օրէնքն ու զինքը կը յարգէ, չկարողանալով բնականաբար ստանձնել այսպիսի վիճակի մը պատասխանատուութիւնը և նկատելով միանգամայն որ ընդհուպ կաւարտի իր պաշտօնավարութեան օրինական շրջանը, հարկ կը համարի մատուցանել իր հրաժարականը և պատկանելի ժողովիդ հեղինակութեան և իմաստութեան կը թողու տնօրինել դարմանն այս վիճակին։

«Մնամ խորին յարգանօք՝

(Ստորագր. խառն ժողովոյ անդամոց)

«Յ. Գ.—Ընդ գրոյս կը ներկայացնենք նաև բացատրական գիր մը, որ կը պարզէ մեր հրաժարականին տեղի տուող պատճառները»։

2) Ազգային վարչութեան ատենապետի հրաժարականը

«Վսեմաշուք ատենապետ էֆ. ազգ. երեսփ. ժողովոյ.

«Պահ մը մէկդի թողլով անձնական արժանապատուութիւնս, ազգ. վարչութեան դէմ յանձին իր ատենապետին ի գործ դրուած անորակելի անարգանքին վրայ խորին ցաւս կը յայտնեմ պատկանելի ժողովոյդ և կը յուսամ ներողամիտ կըլլաք ինձ, որ հրաժարիմ երեսփոխութենէ։

«Թէ անցեալ փոթորկալից օրերու և թէ ներկայիս մէջ ազգիս ծառայելու պարտականութեան առջև բնաւ չեմ ընկրկած, օրէնք և իրաւունք ի ձեռին պաշտպանած եմ անոր շահերը, մաքառելով շատ անգամ արգելքներու դէմ, որք զիս վայրկեան մը տարին մինչև մահուան դուռը, ուստի իբրև ազգային մի անհատ իմ բաժինս լրուած կը համարիմ։

«Թող ամէն ոք իր պարտականութիւնը կատարէ։

«Մնամ Ն. վսեմութեան խորին յարգանօք

«Դոքտ. Ս. Սեղբոսեան

«Յ. Գ.—Ըստ իմ խոստման՝ յարկիս կը ղրկեմ նաև 16 պատուարժան երեսփոխանաց հարցապնդումին առթիւ պատրաստած բացատրական գիրս, որ նախապէս խառն ժողովոյ բովէն անցած ըլլալով՝ պատկանելի ժողովոյդ ներկայացուիլը 3 ամիս յետաձգուած էր, Իզմիրի ցաւալի դէպքին առաջ բերած զգացութեան պատճառով»։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ախալցխա, 3 նոյեմբերի

Տեղիս յաջորդարանի դահլիճում անցեալ հոկտեմբերի 31-ին տեղի ունեցաւ յաջորդի ընտրութիւն։ Եկած էին Ախալքալաքի գաւառից 7 պատգամաւոր՝ ընտրութեանը մասնակցելու և Ախալցխայի գաւառից 8-ը, բոլորը միասին 15, որոնք շատ անտեղի վիճաբանութիւններից յետոյ եկան այն եզրակացութեան, որ յաջորդութեան համար քուէարկելու են Եփրեմ եպիսկոպոսին և անծանօթ Իսահակ վարդապետին. գաղտնի քուէարկութիւնից յետոյ պարզվեց, որ Եփրեմ եպիսկոպոսը ստացել է 8 ընտրողական քուէ և 7 ոչ-ընտրողական, Իսահակ վարդապետը՝ 7 ընտրողական և 8 ոչ-ընտրողական, և յայտարարվեց Եփրեմ եպիսկոպոսը ընտրված. բայց պատգամաւորները, կասկածելով որ մի գուցէ հրաժարվի Եփրեմ եպիսկոպոսը, միաձայն որոշեցին անձնափոխանորդութեան համար գաղտնի քուէարկելու Իսահակ վարդապետին, որը ստացաւ 10 ընտրողական քուէ և 5 ոչ-ընտրողական քուէ և յայտարարվեց ընտրված անձնափոխանորդ Իսահակ վարդապետը։ Եփրեմ եպիսկոպոսի ընտրութիւնը հակառակ է Վեհափառի կոնդակին, որովհետև Վեհափառի կոնդակով նախ պէտք է ընտրեալի համաձայնութիւնը առնել և ըստ այնմ ընտրել, բայց մեր պատգամաւորները ընտրեցին Եփրեմ եպիսկոպոսին՝ առանց համաձայնութիւնը ստանալու. և կասկածելով, որ կարող է պատահել որ ընտրեալը հրաժարվի, անմիջապէս անձնափոխանորդութեան համար քուէարկեցին գաղտնի՝ Իսահակ վարդապետին, որից ստացել էին համաձայնութիւն յաջորդութեան համար։

Պատգամաւորները երբ ընտրվեցին ժողովրդից, անմիջապէս պարտական էին իմանալու եպիսկոպոսների ու վարդապետների անունները և նրանց կենսագրութիւնները և յետոյ նրանց բարեհայեցողութեամբ ընտրեալի համաձայնութիւնը առնել գրաւոր, որպէսզի ընտրութեան րոպէին համարձակ կարողանան քուէատուփը դնել տալ քուէարկելու համար, որով կատարված կը լինէր Վեհափառի կոնդակի իմաստը ճշդութեամբ և թէ ժողովրդի ցանկութիւնը կամ իրաւունքը։ Ախալցխեցի

ԻՆՉ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ*)

(Բաց նամակ Շիրվանզադէին)

Մեր տաղանդաւոր վիպասան և նոյնքան տաղանդաւոր դրամատուրգ Շիրվանզադէն, վերադառնալով Եւրոպայից, իրան նուիրել է հրապարակախօսութեան։

Մենք, ի հարկէ, ոչինչ չունենք, որ վիպասաններն ու դրամատուրգները պարապէին գրական այդ ճիւղով։

Ճիշդն ասած, շատ պատասխանատու ճիւղով, բայց... բայց երբ նրանք իրանց գրչով քննում ու քննադատում են հարցեր, խնդիրներ, որոնց հետ նրանք ծանօթ չեն, ահա այդ դէպքում նրանք սահում են, սայթաքում և երբեմն սայթաքում շատ վատ—սայթաքելով ընկնում են։

Ահա այդպիսի հրապարակախօսական անաջող սայթաքում արել է Շիրվանզադէն «Հորիզոնի» 246-րդ համարում։

Նա տպել է մի յօդուած «Խնայեցէք Թատրօն» վերնագրով և նրա մէջ թոյլ է տուել իրան այսպիսի խորհրդածութիւններ։

«Կան ժամանակներ, երբ մարդիկ մոռանում են նոյնիսկ տարրականը և հարկաւոր է լինում այբուբենը յիշեցնել նրանց։

«Այդպիսի ժամանակն էր ռուսահայ հասարակութեան համար վերջին փոթորկալի տարիները։ Սխալ ըմբռնված քաղաքատնտեսութեան տնածին պաշտպանները հասան մեզանում այն ծայրայեղութեան, որ սկսեցին մարդու մէջ տեսնել միայն և միմիայն մարմինը։ Հոգին տրվեց մոռացութեան, հարկաւ և նրա պահանջները»։

Թէ ինչ ժամանակների մասին է խօսում Շիրվանզադէն, երբ միմիայն մարմինը տեսան և մոռացան հոգին, չը գիտենք։ Եթէ նա ակնարկում է 1905—908 թւականներին, դա գլխովին սխալ է։ Երբէք, գոնէ մեզանում, ոչ ոք տեղից վեր չը կացաւ և «Ջանք չը դրեց հալածել հայ կեանքից բարձրն ու գեղեցիկը», ինչպէս պնդում է հաւատացնել ընթերցողներին Շիրվանզադէն։

Ես կրկնում եմ և պնդում, որ այդպիսի բան տեղի չէ ունեցել, և թատրօնը, գեղարուեստը նոյն այդ տարիներում նոյնքան յարգված են եղել «քաղաքատնտեսութեան և սօցիալիզմի մասին» խօսողների կողմից, որքան և առաջ, որքան և այսօր։ Դրան վկայ մեր տաղանդաւոր դերասաններ Աբէլեանը, Սիրանոյշը, Մայսուրեանը, Զարիֆեանը, Յարութիւնեանը և ուրիշներ։ Միթէ 1907—1908—1909 թւականներին հայ թատրօնը աւելի քիչ էր այցելվում, քան այժմ. վերջապէս, թող Շիրվանզադէն նեղութիւն կրի նայել Հայոց Դրամատիկական Ընկերութեան տպած «Տեղեկագիրը» և այնտեղ կը տեսնէ, որ հայ ինտելիգենտը, հայ միջին և ստորին խաւերը, այսինքն նրանք, որոնք, ըստ Շիրվանզադէի, «հրապարակի ժամանակաւոր տէրերն էին», դարձել նրանք էին լցնում թատրօնը, նրանք էին յաճախում հայ բեմը, նրանք էին յօբելեաններ կազմում, տաղանդը գնահատում, փառաբանում։

Ահա թէ ինչ կը նշանակէ երկար նստել Պարիզում և Թիֆլիս գալով խօսել ու գրել այն, ինչ որ չէ եղել կամ, ճիշդն ասած, որի հակառակն է եղել։

Ճիշդ է միայն մի բան. այդ այն է, որ «հրապարակի տէրերը» ամբողջ սրտից պահանջել են մի բան մեր թատրօնից՝ լաւ րեպերտուար, լաւ պիէսաներ, և ամեն անգամ, երբ եղել են այդպիսիները, նա նոյն այդ չորս-հինգ տարում լցրել է թատրօնական դահլիճը։ Ես կը յիշեցնեմ «Դոկտոր Շտօկմանը», «Վատ Հովիւները», «Ցար Ֆեօդորը», «Ուխտադրժներն» ու «Արդունքի Հովիւը», «Հիդրան», «Հայրենիքը» և այլն և այլն, որոնք լցնում էին դահլիճը։ Եւ եթէ այնուամենայնիւ հայ թատրօնը մեռնելու վտանգի մէջ էր գտնվում, դրա պատճառը յամենայն դէպս ոչ ժամանակն էր և ոչ էլ «հրապարակի ժամանակաւոր տէրերը» և «հաց հաց» քարոզը, այլ... մեր հաստափոր աղաներն ու Սօլօլակը, որը խոյս էր տալիս և՛ հայ թատրօնից, և՛ ռուս թատրօնից, և գեղարուեստից, և՛ ընդհանրապէս ամեն տեսակ հոգեկան զուարճութիւններից *)։

Ահա թէ ում և ումը պէտք է ուղղվեն ձեր խօսքերը, եթէ անպատճառ ուզում էք խօսել։

Մենք գուցէ կանգ չառնէինք Շիրվանզադէի այս ոտնձգութեան վրա՝ հայ ինտելիգենցիայի հասցէին, բայց, դժբաղդաբար, մեր տաղանդաւոր գրողը, Թիֆլիս գալով և հրապարակախօսութեան ասպարէզն իջնելով, մի քանի անգամ քարեր է շպրտել այն կողմը, ուր ինքը ոչ միայն չէ ճանաչում, այլ որը ինքը և չէ էլ հասկացել, գուցէ դրա համար էլ չէ համակրում։

Ի հարկէ, դա ճաշակի և հասկացողութեան գործ է. սակայն ճաշակն ու հասկացողութիւնը, երբ հրապարակ է գալիս մամուլի էջերում, նա պէտք է կշռադատի ամեն ինչ. հակառակ դէպքում դուրս կը գայ Պուրիշկեվիչի խայտառակ բացագանչութիւնը՝ наша пошлая интеллигенція.

Իսկ դա լաւ ճանապարհ չէ։

Ահա այդ վատ ճանապարհի վրա ոտք դնելուցն է, որ մենք զգուշացնում ենք «Գործակատարի յիշատակարան», «Քաօս» և «Պատւի համար» տաղանդաւոր գրուածքների տաղանդաւոր հեղինակին։

Ա. Աթանասեան

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ**)

Պետերբուրգ, 5 նոյեմբերի

Բարօն Մէյենդօրֆը յիշեցնում է, որ դպրոցական բոլոր օրէնքները աւելի երկարատև են, քան նրանց ստեղծող քաղաքական ույժերը. տարրական դպրոցների կազմի մէջ տեղի ունեցող մշտական մասնաւոր փոփոխութիւնները պատճառում են անուղղելի վնաս։ Անհամեմատ վիճելի հարցերից մինը հանդիսանում է ներկայ նախագծի մէջ այլազգիների դպրոցի հարցը. հոկտեմբերեանների առաջարկութեան հակառակորդները կանգնում են երբեմն քաղաքական, երբեմն մանկավարժական տեսակէտի վրա, սակայն ժողովրդական դպրոցների և պետական շահերի միջի կապը իր զարգացման ներկայ շրջանում եղել է միշտ ներքին քաղաքականութեան անհամեմատ դժուարին ու զգալի հարցերից մինը։ «Ժողովրդական ուսուցիչը, իբրև ժողովրդական դպրոցի գլխաւոր գործիչ, չէ կարող մնալ իր սաների մէջ ձեր իշխանները։ Դուք նոյնիսկ հարկաւոր քանակութեամբ ժողովրդական ուսուցիչներ չունէք հէնց ռուսական դպրոցների համար, ուր մնաց որ երևակայեալ աւելորդ ուսուցիչներին հրամցնել էք ուզում այլազգիներին։ Մի մոռանաք, որ Ռուսաստանը այժմ կանգնած է խոր դիլեմայի առաջ, նրա հոգևոր կեանքի յուշարձանը կազմում է Տօլստոյի ծայրայեղութիւններից մինչև հայր Վօստորգօվի ծայրայեղութիւնները. ո՞ր կողմն են կանգնած ձեր ժողովրդական ուսուցիչները։ Միամտութիւն է կարծել՝ թէ բաւական է գրել մի յօդուած, և այլազգիների ժողովրդական դպրոցը կը դառնայ ռուսական։ Այդպիսի ճանապարհով չէ բնաւ, որ ստեղծվում է ռուսական պետական դպրոցը։ Որպէսզի այդ նպատակի համար անհրաժեշտ մարդկանց թիւ ստեղծվի, ձեզ հարկաւոր է ժամանակ, հարկաւոր են ռուս ժողովրդի կեանքն ու հանուր կուլտուրան ղեկավարող հոգևոր ույժեր։ Ամբողջովին ընդունելով այն բանաձևը, որ յեղափոխութիւնը Ռուսաստանում ոչ թէ ռուսական էր, այլ այլազգիների, դուք ինքներդ դժգոհ տարրերի բանակն էք ներսում ոչ միայն ներկայ կառավարութեան նկատմամբ հակապետականօրէն տրամադրված տարրերին, այլ և մի ահագին քանակութիւն այդ ցաւով չը տառապող ցեղերի։ Ռուս ուսուցիչը ծայրերկրում, անգամ երբ նա չէ հանդիսանում օպպօզիցիօն տրամադրութիւնների կողմնակից, ինքն արդէն իր անձով ներկայանում է բովանդակ շրջապատի քննադատութեան կենդանի մարմնացում և այդ միջավայրում մտցնում է սօցիալական քայքայման տարրեր։ Ցեղեր, որ վարդապետելու միսսիան կարելի է յանձնել լոկ նրանց, որոնք համակված են վարդապետելու կոչումով, բայց մարդու վրա պետական գաղափարի տարածման պաշտօնը դնել ծայրերկիրներում սոսկ նրա համար, որ նա ունի դասաւանդելու իրաւունքի վկայական, դա կը նշանակէ հարցը շինել զուտ դիւանական։ Ռուսաստանի ոչ ռուս ազգաբնակութեան ճնշող մեծամասնութիւնը հակառակ չէ գնում նրա պետական շահերին. շատերը առանձնապէս մանր ժողովուրդները իրանց ամբողջ աշխատանքը և իրանց ամբողջ միտքը մտցնում են ընդհանուր ույժի մէջ։ Այդ ժողովուրդները չունեն ուրիշ ապագայ, բայց եթէ միմիայն ռուսական պետականութիւնը։ Օտարազգի օրգանիզմների մէջ դուք կը գտնէք բաւականաչափ պետականապէս տրամադրված անձանց, քան այժմ ընիկ ռուսական գիւղում։ Այլազգիների ամուր ոստայնների վրա պետականութեան ամրութիւնը և ամբողջութիւնը հիմնել անհամեմատ դիւրին է, քան ուսուցչական սեմինարիաներն աւարտածների ույժերի վրա միայն այն պատճառով, որ այդ ույժերը բնական ռուսական են։ Ռուս նացիօնալիզմի և ռուսական պետականութեան պրօբլէմը այնքան էլ հասարակ չէ. ուրիշ երկիրներում ազգային քաղաքականութիւնը, ինչպիսին դուք էք հասկանում, այսինքն որ ամենը մի կաղապարի մէջ լինի, աջողվում է շնորհիւ նրանց ազգագրական կազմի միօրինակութեան, որ խեղդում է պետական լեզուով չը խօսող աննշան խմբակներին։ Եթէ դուք կամենում էք այդպիսի պատերազմ յայտարարել, ունէ՞ք, արդեօք, ժողովրդական կարող ուսուցիչների բանակ։ Չէ կարելի հօ քաղաքականութեան մէջ ղեկավարվել միայն զգացմունքով, եթէ ձեր ազգային ոգևորութիւնը անհամապատասխան է օրվայ իրական հանգամանքներին. ապա ուրեմն բացի ինքնախաբէութիւնից նա ձեզ ոչինչ չի տայ։ «Պատրիօտիզմի» կոչը բնազդների առաջ այդ երկրպագութիւնը հաւասարազօր է սինդիկալիստների իրաւազուրկ պրօլետարիատի բնազդների առաջ գլուխ խոնարհեցնելուն։ Լաւագոյնը այն կը լինի, որ դուք ձեր ույժերը կենտրոնացնէք, որպէսզի ռուս ազգաբնակութեան մէջ ստեղծվեն ամենից առաջ ազատ կուլտուրական զարգացման պայմաններ։ Արէք այդ, և ձեր գործը ապահովված է։ Չէ կարելի ռուսական պետութիւնը հիմնել բարեյոյս «չինօվնիկի» վրա. նա բարեյոյս է, քանի նրան վճարում են, քանի ույժը նրա կողմն է...» (երկարատև ծափեր բոլոր աթոռներում)։

Զեկուցանող Ֆօն-Անրէպը, ընդգծելով որ բարօն Մէյէնդօրֆի ճառը իր անկեղծութեամբ և ճշմարտութեամբ գամեց հանուր Դումայի ուշադրութիւնը, մատնանշում է, որ չէ կարելի համաձայնել հռետորի այն կարծիքի հետ, թէ ամեն բան ցաւալի վիճակի մէջ է. պէտք է ընտրել միջին ճանապարհը՝ որ ռուսական դպրոցը պէտք է լինի պետական։ Դա անկասկած է. բայց որ ընդհանուր կրթութիւնը առաջին չորս տարիներում լինելու է ռուսական կամ ուրիշ որևէ տեղական լեզուով—պետութիւնը դրանից ոչինչ չէ կորցնում։ (Հ. Գ.)

(Կը շարունակվի)

ՏԱՒՐԻԿԵԱՆ ՊԱԼԱՏԻՑ

Պետերբուրգ, 30 հոկտեմբերի

Եթէ կայ մի հարց, որի առիթով միանում են թէ կառավարութիւնը մի կողմից և թէ ժողովրդի տարբեր կուսակցութիւնները միւս կողմից, դա ժողովրդական լայն կրթութեան հարցն է։

«Ընդհանուր պարտադիր և ձրի կրթութիւն»—սա 1905 թւականի լօզունգներից մէկն է, որ կարողացել է մինչև օրս չը խեղդվել և պահպանել իր գոյութիւնը մինիստրական ծով թղթերի մէջ։

Այո, ինչ 1905 թւականին յեղափոխական ձախակողմեան կուսակցութիւններն էին պահանջում և առաջարկում կառավարութեան, այսօր ինքը կառավարութիւնն է օրինագիծ կազմում և դնում Պետ. Դումայի քննութեան իրաւասութեանը։

Այսպիսով կարծես թէ իրականանում է Ստօլիպինի այն մեծ լօզունգը, որ յայտարարեց 1906 թ. պատերազմա-դաշտային դատարանների հետ միասին թէ՝ «նախ խաղաղութիւն և ապա ռեֆօրմա»։

Եւ այսօր—երբ երկրում ըստ երևոյթին խաղաղութիւն է տիրում—կառավարութիւնը կարծես թէ ընդ առաջ է գնում իր խոստման իրագործութեանը։

Այսօր, երբ ընդհանուր վիճաբանութիւնը ժողովրդական նախնական կրթական օրինագծի մասին արդէն աւարտվել է, ես կուզէի ընդգծել և մի յայտարարի բերել այն բոլոր կարծիքներն ու ուղղութիւնները, որոնք տեղի ունեցան Պետ. Դումայում իր 9-օրեայ նիստերի ժամանակ։

Անում եմ այս նրա համար, որպէսզի «Մշակի» ընթերցողները, հեռագրական հատ ու կտոր տեղեկութիւններից զատ, ընդհանուր, ամփոփ մի հայեացք կազմեն այդ խնդրի շուրջը ծագած հարցերի մասին։

Մինչև օրս, համաձայն 1828 թ. օրէնքի, Ռուսաստանում հիմնված էին եկեղ.-ծխական դպրոցներ, որտեղ միայն կարողանում էին ձրի կրթութիւն ստանալ ռուս ազգաբնակութեան ամենաստորին խաւերի զաւակները։

Այդ դպրոցները ամբողջապէս գտնվում էին ռուս հոգևորականութեան իշխանութեան տակ, որոնք,—ինչպէս նկատեց Ն. Միլիւկովը,—փոխանակ անհատին տալու իր անհատական կատարելագործումը՝ նրա մէջ մեռցնում էին այդ ու կերպարանափոխում կենդանի, բայց անշունչ դիակի։

«Այդ ձևի դպրոցական կրթութիւնը,—նկատեց Պոկրօվսկի 2-դ (սօց.-դեմ.),—մեզ տուեց ռուս-ճապօնական պատերազմի պարտութիւնը։ Այդտեղ կառավարութիւնը առաջին անգամ տեսաւ, որ իրան դէմ է դուրս եկել կուլտուրական մի փոքրիկ պետութիւն, և այդտեղ նա առաջին անգամ զգաց կուլտուրական ույժի նշանակութիւնը։ Եւ կարելի է ասել, որ այդ օրից միայն նա հասկացաւ ընդհանուր՝ գուցէ և պարտադիր՝ կրթութեան կարևորութիւնը»։

Զգացին այդ բոլորը, սկսած ամենաաջից մինչև իսկ ծայրայեղ ձախակողմեանները։

Եւ այսօր, երեք տարի Դումայի արխիվում քնելուց յետոյ, նոր միայն հրապարակ է նետվում ընդհանուր կրթութեան այդ խնդիրը, որպէս մի տօնակատարութիւն ռուսական կօնստիտուցիայի հինգամեայ յոբելեանի։

Կառավարութիւնը համաձայն է, որ լինի ընդհանուր նախնական կրթութիւն, «սակայն՝—ասում է նա—դպրոցների կառավարութեան գործը խլելով հոգևորականութեան ձեռքից՝ ես եմ առնելու իմ ղեկավարութեան տակ։ Իսկ դրա ծախսերը տալու են տեղական քաղաքային այն ինքնավարութիւններն ու զեմստվօները, որոնք կուզենան կանգնել այդ հիմնարկութեան գլուխը»։

Աջակողմեանները, որպէս կղերականների հաւաքածու, պաշտպանվում են այդ նոր օրինագծի դէմ և սինօդի օբեր-պրօկուրօր Ուլեանովի բերանով աշխատում են պահպանել եկեղեցական նախկին աւտօնօմիան։ Նրանք բողոքում են կառավարութեան այդ քայլի դէմ և յանձին Պուրիշկեվիչի սարսափում Ռուսաստանի «անկումից», որովհետև, ըստ նրա կարծիքի, «կառավարութիւնը քնած է, և նա դրանով կարող է դպրոցները գցել յեղափոխական ջհուդների ձեռքը»։

Իսկ Կրիվցօվը աւելի հեռու գնալով առաջարկում է՝ «ոչ թէ միայն ծխական դպրոցները թողնել սինօդի իրաւասութեան տակ, այլև ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան տակ գտնվող բոլոր՝ թէ միջնակարգ և թէ բարձրագոյն դպրոցները»։

Այստեղ երևան է գալիս Պոկրօվսկի 2-րդը (ս.-դ.) և ասում է. «Դրանով չարիքը չէ բուժվում, քանի որ մինչև օրս եկեղեցին հակառակ կառավարութեան կամքի չէ գործել և ոչ էլ կառավարութիւնը կարող է առանց եկեղեցական խորհուրդների առաջնորդվել ապագայում»։

Բուլատը (տրուդ.) աջակողմեաններին հանգստացնելու համար շեշտում է, որ «խնձորը ծառից թէև պոկվել է, բայց և այնպէս խնձորենուց հեռու չէ ընկել»։

Իսկ ժող. լուս. նոր մինիստր Կասսօն վերջնականապէս հանգստացնելու համար շեշտում է, որ «այդ դպրոցները գտնվելով մինիստրութեան իշխանութեան տակ, միւս կողմից տեղական ինքնավարութեան գործը պէտք է յանձնվի ոչ թէ քաղաքային կամ զեմստվային ինքնավարութիւններին, այլ ազնուականութեան ղեկավարութեանը»։

Այսպիսով ահա մենք տեսնում ենք երեք ուղղութիւն։ Առաջինը՝ պահանջում է թողնել ժողովրդական ստորին կրթական գործի ղեկավարութիւնը հոգևորականութեան ձեռքին, գլուխ ունենալով սինօդը. Երկրորդը՝ որ դա խլվի և անցնի լուսաւորութեան մինիստրութեան ղեկավարութեան տակ. իսկ Երրորդը՝ որ բացէ ի բաց ժխտում է թէ մէկը և թէ միւսը։

Առաջինի կողմնակիցներն են ծայրայեղ աջակողմեանները, երկրորդինը՝ հոկտեմբերեաններն ու կադէտները, իսկ երրորդինը՝ ծայրայեղ ձախակողմեանները։

Դուման քուէարկելով ընդունեց այդ օրինագիծը, որի կողմնակիցներն էին հոկտեմբերեաններն ու կադէտները. իսկ դէմ՝ ծայրայեղ աջակողմեաններն ու ձախակողմեանները։

Այժմ մնում է նրա յօդուածային քննութիւնը, որի արդիւնքներին կանցնեմ հետևեալ անգամ։

Մ. Աղեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Վրաստանի էկզարխ Ինոկէնտի արքեպիսկոպոսը նոյեմբերի 8-ին ռուսաց սինօդի նախագահ Անտօնիյ միտրօպօլիտից ստացաւ հետևեալ հեռագիրը. «Սինօդը որոշեց թոյլ չը տալ հոգեհանգիստներ կատարել կոմս Տօլստոյի համար»։

◆ Երկուշաբթի օրը Թիֆլիսի քաղաքային դուման յարգեց Լ. Տօլստոյի յիշատակը ոտքի կանգնելով և նիստը փակեց ի նշան սգի։

◆ Երկուշաբթի, դումայի նիստում քաղաքագլուխ Ալ. Խատիսեանը արտասանեց Տօլստոյի յիշատակին մի ճառ, որի բովանդակութիւնը կը տանք հետևեալ անգամ։

◆ Տեղական ռուս օրաթերթերից մի քանիսը զետեղել են Լ. Տօլստոյի պատկերը և բազմաթիւ քաղուածքներ արել մեծ գրողի մասին։

◆ Երէկ Բաթումի վրայով Կ. Պոլիս մեկնեց Անգօրայի առաջնորդ Բաբգէն եպիսկոպոսը։

Ծան. Խմբ.—Այս յօդուածը պէտք է լոյս տեսնէր «Մշակի» կիրակնօրեայ՝ նոյեմբերի 7-ի համարում, բայց տեխնիկական անյարմարութիւնների պատճառով լոյս է տեսնում այսօր։

*) Դրանց կարելի էր լինում թատրօն բերել միմիայն երբ տոմսերը զոռով տներն էին ուղարկվում զանազան ընկերութիւնների կողմից։ Ա. Ա.

**) Տես «Մշակ» № 249.

◆ Վաղը, Թիֆլիսի Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութեան նիստում բացի մեղուաբուծութեան վերաբերեալ խնդիրներից կը զեկուցվի նաև Կարախանեանի հաղորդագրութիւնը Նախիջևանի գաւառի լեռնային շրջանում տեղի ունեցած կաթնատնտեսական փորձերի մասին։

◆ Վրաց ազնուականութեան ժողովը 6,000 րուբլուց բաժին հանեց իբրև նպաստ՝ ի միջի այլոց՝ Մցխեթի ս. Նինայի վանքին 400 ր., պատմութեան ու ազգագրութեան ու վրացական ընկերութեան 3,500 ր., «Գանաթլեբա» ընկերութեանը 400 ր., վրաց ֆիլարմօնիկ ընկերութեան 500 ր., «Մօսավալի» գիւղատնտեսական թերթին 300 ր., և այլն։

◆ Ընթերցողներին յայտնի է այն վէճը, որ տեղի ունեցաւ Թիֆլիսի քաղաքային վարչութեան և Էջմիածնի սինօդի միջև Մուխրանեան կամուրջի բերանին՝ Գալկովի նախկին Ջրաղացի մօտ գտնվող Էջմիածնապատկան տան վերաբերութեամբ։ Քաղաքային վարչութիւնը առաջարկում էր յիշեալ տան համար կանխիկ 25,000 ր. և մտադիր էր մաքրել շինութիւնը և բանալ այդ տեղի վրա հրապարակ. բայց Էջմիածնի ներկայացուցիչ Եփրեմ եպ. Սուքիասեանը պահանջում էր 40,000 ր.։ Այժմ Էջմիածնի սինօդը որոշել է բոլորովին չը վաճառել այդ տունը, այլ քաղ. վարչութեան հետ համաձայնութիւն կապել, զիջելով տան ճակատից 2 սաժէնաչափ տարածութիւն յօգուտ քաղաքի։ Իսկ տան տեղում կառուցանել նոր շինութիւն, որի ստորին յարկը բաղկացած կը լինի խանութներից։ Քաղաքային վարչութիւնը պատրաստում է այժմ համապատասխան առաջադրութիւն և կը ներկայացնէ դումային մօտիկ ապագայում։

◆ Մեզ խնդրում են հաղորդել, որ ֆրանսիացի Թատերասէրներից մէկի յանկարծակի հիւանդութեան պատճառով Alliance française-ի կազմակերպած ֆրանսերէն ներկայացումը, որ պիտի կայանար ամսիս 11-ին, յետաձգվում է մի քանի օրով։

◆ Լուր է պտտում, որ նորերս Մոսկվայում ինքնասպանութեամբ իր կեանքին վերջ տուած, գեղարուեստի և Թատրոնի յայտնի սիրահար՝ Տարասեանցի ժառանգները մտադիր են հանգուցեալի յիշատակը յաւերժացնելու համար մի խոշոր նուիրաբերութիւն անել հայ Թատրոնի ապահովութեան համար։

◆ Կովկասեան գլխաւոր իշխանութեան համաձայնութեամբ Քութայիսի նահանգական դատարանին է յանձնվում Գուդաուտի վարչութեան նախկին գրագիր Բենեդիկտովը քր. պատժ. 362-րդ յօդուածի մեղադրանքով։

◆ Թիֆլիսի կենտրոնական իշխանութեան կարգադրութեամբ յատուկ միջոցներ են ձեռք առնվում Կովկասում տարածված բորոտութեան հիւանդութեան դէմ։

◆ Թիֆլիս քաղաքի ներկայ դումայի ձայնաւորների լիազօրութիւնների ժամանակը լրանում է 1911 թ. յունիսի 24-ին։ Ինչպէս յայտնի է, այժմեանից ձեռնարկված են ընտրողների ցուցակները կազմելու աշխատանքներին, որոնք պատրաստ են լինելու յունվարի կէսերին։ Ցուցակներ կազմելու վրա հսկում է քաղաքային վարչութեան անդամ Ն. Ն. Արղութեան-Երկայնաբազուկը։

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը մօտիկ ապագայում մրցում է նշանակելու մի քանի դասագրքերի համար։

◆ Առևտրի մինիստրութեան մէջ վերջնականապէս վճռվել է Կիևի և Մոսկվայի բարձր առևտրական դասընթացքները վերածել մասնագիտական բարձր կրթական հաստատութիւնների բոլոր իրաւունքներով։

◆ Ներքին գործերի մինիստրութեան իրաւասութիւնից դուրս է գալիս անասնաբուժական մասը և անցնում է երկրագործութեան մինիստրութեան։

◆ Սաթունեան արքեպիսկոպոսի մահվան առիթով Սևանի վանահայր Սարգիս եպիսկոպոսը խմբագրութեանս անունով ուղարկված մի հեռագրով յայտնում է իր խորին ցաւակցութիւնը։

◆ Բագւում օդաչու Գոբէր-Վօլինսկիի հետ 10 րօպէի չափ թռիչք է կատարել Բագուի քաղաքապետ փոխ-գնդապետ Մարտինօվը։

◆ Մեզ գրում են Փոթիից, նոյեմբ. 7-ից. «Այսօր ծխական ուսումնարանի դահլիճում կատարվեց հոգեհանգիստ հանգուցեալ Թեմ. առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեանի յիշատակին, ներկայ էին ծխական ուսումնարանի աշակերտ-աշակերտուհիները, ծխական և շինարար հոգաբարձութիւնը. բացակայում էր տեղական հայ հասարակութիւնը»։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Նոյեմբ. 5-ին նաւթարդիւնաբերական շրջաններում լուր տարածվեց, իբր Եղբ. Նոբէլ ֆիրման գնում Ա. Ի. Մանթաշեան և Ընկ. ամբողջ նաւթարդիւնաբերական ունեցուածքը։ Այս լուրի մէջ, որ պարբերաբար երևում է բօրսայում, ոչինչ անհաւանական բան չը կայ։ Միևնոյն ընկերութիւնն էր, որ Նոբէլին ծախեց ռուսական իր պահեստները։ Սակայն նախ քան այս լուրը տպելը, մենք տեղեկութիւններ քաղեցինք, ըստ որում երևաց, որ այդ գնման մասին ոչինչ յայտնի չէ ոչ Մանթաշեան և Ընկ. տեղական գրասենեակում, ոչ էլ ֆիրմային մօտ կանգնած մարդկանց։ Նոյն իսկ ֆիրմաներից մինը հեռագրեց այդ մասին Թիֆլիս, որտեղից պատասխան ստացվեց, թէ ոչինչ յայտնի չէ։ Հաւանօրէն այդ լուրը ստեղծվեց այն պատճառով, որ Նոբէլը վերջերս մեկնեց Թիֆլիս Գլակսինի հետ։ Ինչպէս մենք լսեցինք, այդ մեկնումը նպատակ ունէր բանակցութիւններ վարել ձեռք բերելու Մանթաշեանի Սև-քաղաքի գործարանը կապալով։ Այսպէս թէ այնպէս, բօրսայում խօսում են, որ Մանթաշեանը Նոբէլին վաճառել է իր ակցիաները. այդ լուրին տեղեակ անձեր հաւատ չեն ընծայում։ Սակայն նա բօրսայի մէջ թողեց սենսացիօն տպաւորութիւն։ («Б.»)

◆ Մեզ հաղորդում են, որ Պետերբուրգում մօտիկ ապագայում քննվելու է Կովկասի Փոխարքայի առաջադրութիւնը՝ Անդրկովկասի նաղէլ հողերը յետ գնելու մասին։ Նախագծի համաձայն, մտադրութիւն կայ ի միջի այլոց ոռոգելու հողերը գնահատել դեսեատինը 30 ր.։ Ինչպէս լսեցինք, Գանձակի և Երևանի նահանգների հողատէրերը յատուկ պատգամաւորութիւն են ընտրել Պետերբուրգ ուղարկելու, որը խնդրելու է աւելի արդարացի գնահատութիւն տալ հողերին։ Պատգամաւորութեան մէջ, ի թիւս միւսների, մտնում են հետեւեալ խոշոր հողատէրերը. Հ. Զ. Ա. Թաղիեվ, Դ. Աւան-Իւզբաշեան, Մ. Դոլուխանեան, Ա.-բէկ Ադիգեօզալով, Իսկենդեր-բէկ Ռուստամբէկով, Ֆարուխ-բէկ Վէզիրով և այլն։ Պատգամաւորութիւնը այս օրերս կը մեկնէ Պետերբուրգ։ («Б.»)

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Հայկական Ներկայացում

Հայկական բեմի վրա նոյեմբերի 8-ին ներկայացրած «Պարոն մինիստրը» պիէսը թոյլ տպաւորութիւն թողեց հանդիսականների վրա։

Պիէսը չէր շարժում մեծ հետաքրքրութիւն և դերակատարութիւնը առաջ էր ընթանում առանց աշխոյժի, մի տեսակ յամրաքայլութեամբ։

Պիէսի գաղափարն այն է, որ պճնասէր, զուարճասէր, եսական և անբարոյական կնոջ պատճառով փչանում է հասարակական գործողը։ Պիէսի հերոսը, որ խմբագիր հրապարակախօս է մի քաղաքական մեծ թերթի, իսկ յետոյ նաև մինիստր, սկսում է կամաց կամաց իրան դաւաճանել կնոջ ազդեցութեան տակ և իր բարձր բարոյական դիրքից ընկնում է և տապալվում։

Այդ երևոյթը տեղի ունի իրականութեան մէջ և Ֆրանսիայում և Գերմանիայում, արձանագրվեցին վերջին տասնեակ տարիներում մի քանի տխուր դէպքեր այդ բնաւորութեամբ։

Հեղինակը այդ դէպքերի ազդեցութեան տակ գրել է իր պիէսը, որը Թարմ տպաւորութիւնների և յիշողութիւնների շնորհիւ ընդունվել է այնտեղի հասարակութեան կողմից մի որոշ աստիճան ջերմութեամբ։

Բայց պիէսը, իբրև գեղարուեստական և դրամատիկական գործ, ամենևին այնպիսի արժանաւոր մի երկասիրութիւն չէ, որ նա կարողանայ տպաւորութիւն գործել ամենուրեք և ամեն ժամանակ։

Եւ յամենայն դէպս անհրաժեշտ էր առանձին ճիգ թափել ներկայացնելու նրան աւելի աշխոյժ և կենդանի կերպով։

Աբելեան, որ կատարում էր գլխաւոր հերոս Կորդըլօնի դերը, տուեց հոգեբանական վերապրումների մի քանի հետաքրքրաշարժ տեսարաններ։ Նա բնական էր իր անձուն սիրոյ մէջ դէպի մատաղահաս գեղեցիկ Անտուանէտը և կարեկցութեան արժանի իր ողբերգական տանջանքների մէջ, երբ սիրոյ առարկան դաւաճանում էր նրան։

Անտուանէտի դեր կատարող Մայսուրեան աւելի քան գոհացուցիչ կերպով ուշք էր դարձրել իր դերի արտաքին և տեխնիքական պահանջների վրա։ Նա համապատասխան բնորոշ գրիմ էր արել. նա շքեղ հագնվել էր, նա շարժվում էր վայելչօրէն, իսկ ներքին էութեամբ դերը չէր գործում ուժեղ տպաւորութիւն։ Մայսուրեանին աջողվում են դրամատիկական կտորները, որոնք համարեա բացակայ էին պիէսում։

Բաւական աջող էր տիկ. Արաքս Աննայի դերի մէջ։ Նա ամբողջացրել էր մի բնորոշ տիպ, որ գաղափար էր տալիս նրա էութեան և հոգեբանութեան հետ։ Համեմատաբար աղօտ անցաւ դերի վերջին կտորը։

Միւս դերակատարները բաւարար կատարեցին ուրոյն դերերը, բայց լիովին չէին պատրաստված անսամբլի ամբողջացրած կենդանի խաղի համար։

Սիրող

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, 2 նոյեմբերի

«Մշակի» 241-րդ համարում Խարկովի հայ գաղութի ծխատէր Սրապիոն քահանան ծանօթացնելով ընթերցողներին գաղութի և տեղական աղօթատան անցեալ ու ներկայ վիճակին՝ ի միջի այլոց ասում է. «Բաբգէն վարդապետը, տեսնելով որ բարձրագոյն հոգևոր իշխանութիւնը չէ ուզում նրան թողնել Խարկովի համալսարանում՝ ուսումը շարունակելու, ժողով է կազմում և յայտնում հասարակութեան Էջմիածին վերադառնալու մասին»։

Թիւրիմացութիւնների տեղիք չը տալու համար՝ պարտք եմ համարում յայտնել, որ բարձրագոյն հոգևոր իշխանութեան կողմից՝ թէ հանգուցեալ Խրիմեան Վեհափառ Կաթողիկոսի և թէ սինօդի, ուսումս շարունակելու մասին ոչ մի արգելք չէ եղել, քանի որ համալսարան ուսանելու գնացած էի թէ Խրիմեան Կաթողիկոսի կոնդակի և թէ սինօդի օրագրական վճռի համաձայն՝ ստանալով Քիշինևի կոնսիստորիայից ամիսը յիսուն րուբլի։ Միայն վերջի 1900/01 տարվայ նպաստը Բեսարաբիայի առաջնորդ Տ. Ներսէս արքեպիսկոպոսը չը կամեցաւ ուղարկել և գրել էր Կաթողիկոսին այս մասին՝ պատճառաբանելով որ «միջոց չունենք» կոնսիստորիայից նպաստ տալու ինձ։ Ապա հայրապետական դիւանը գրում է՝ եթէ միջոց չը կայ մնալու՝ վերադառնամ Էջմիածին։ Խարկովի հայ գաղութը իմանալով հեռագրով դիմում է Վեհափառ Կաթողիկոսին և խնդրում թողնել ինձ մնալ, խոստանալով վճարել իմ վերջին տարվայ նպաստը։ Ստանում եմ դրական պատասխան Վեհափառ Հայրապետից, որ կարող եմ մնալ, եթէ գաղութը վճարում է իմ ծախքը։ Վերջին տարին ևս մնում եմ համալսարանում, ծախքս ստանալով գաղութից, որը և, առիթից օգտվելով, հրապարակով իմ շնորհակալութիւնն եմ յայտնում։

Բաբգէն վարդապետ

ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄՆ

Օրէ-օր շատացող պահանջը ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ վերաբերմամբ առիթ է տուել վերջին ժամանակներս երևան գալու բազմաթիւ փոքրարժէք կեղծիքներ, որոնք առաջարկվում են ՍՊԵՐՄԻՆԻՆ նմանող զանազան անուններով (սպերմատին, սպերմինօլ, սպերմօլ, սեկարօվեան հիւթ, հեղուկ և այլն) և միևնոյն ժամանակ կեղծողների կողմից առաջարկվում են ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ համահաւասար և նոյնիսկ նրանից բարձր ազդեցութիւն ունեցող դեղ։ Կեղծողները յաճախ լինում են այնպիսի մարդիկ, որոնք բժշկականութեան հետ ոչ մի առնչութիւն չունեն, օրինակի համար՝ դեղավաճառ և պարֆիւմէրի խանութներ ունեցողները և այլն։ Հասկանալի է, որ այդօրինակ կեղծիքները բժշկականութեան և գիտութեան հետ առհասարակ ոչ մի կապ չունեն, սակայն, որպէսզի գիտական բնաւորութիւն տրված լինի նրանց, կեղծողները իրանց ռէկլամների մէջ բերում են գրականութեան և բժիշկների գիտողութիւնները ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ ԱԶԴԵՑՈՒԹԵԱՆ մասին՝ մոլորութեան մէջ գցելով ոչ միայն հիւանդներին, այլ և պ. պ. բժիշկներին։

Ի նկատի ունենալով այդ, մենք պարտք ենք համարում ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼ յիշեալ կեղծիքներից այն անձերին, որոնք օգտվում են ՍՊԵՐՄԻՆԻՑ։ Գրականութեան մէջ գտնվող բոլոր բազմաթիւ գիտողութիւնները գիտնականների և բժիշկների կողմից՝ արված ՍՊԵՐՄԻՆԻ բուժիչ ազդեցութեան մասին, այն է՝ նեվրաստենիայի, սէռական թուլութեան, ծերութեան, իստերիայի, նեվրալգիայի, արեան պակասութեան, թոքախտի, սիֆիլիսի, սնդիկային բժշկութեան հետեւանքների, սրտի հիւանդութիւնների (չաղութիւն, սրտի անպախտութիւն, սրտի բաբախումն, պէրէբօյ, միօկարդիտ), զարկերակի կարծրացման, ալկօհօլիզմի, ողնաշարի հիւանդութեան, կաթուածների, հիւանդութիւններից բուժված լինելու, յոգնածութեան և այլ հիւանդութիւնների ժամանակ—վերաբերում են ԲԱՑԱՌԱՊԷՍ ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ, հետևաբար և խնդրում ենք գնելու ժամանակ ուշադրութիւն դարձնել „ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻ“ անուանև ֆիրմայի վրա, որովհետև ուրիշ պատրաստվածները ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ նմանեցված կեղծիքներ, որոնք՝ ազդեցութեան տեսակէտից՝ ոչ մի առնչութիւն չունեն նրա հետ, քանի որ միակ իսկական սպերմին ներկայանում է ՍՊԵՐՄԻՆ-ՊԷԼԻՆ։ Սրուակը 3 ռուբ.։ Գրականութիւնը՝ ուղարկվում է ըստ առաջին պահանջման ձրի։

ОРГАНОТЕРАПЕВТИЧЕСКІЙ ИНСТИТУТЪ

ՊՐՈՖԵՍՍՕՐ ԴՕԿՏՕՐ ՊԷԼԻ ԵՒ ՈՐԴԻՔ

Մատակարար ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ պալատի—Ս.-Պետերբուրգում։

(П. 88448) 993. 8—5

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Էնզելի, 25 հոկտեմբերի

Պարսկաստանը տնանկ և ամեն կողմից խառնակ դրութեան մէջ է գտնվում։ Դրամի կատարեալ սով է, արդիւնաբերութիւնը համարեա կանգնած է։ Եւ այս կրիտիկական մոմենտից տեղեկութիւն չունենալ ձևացող կենտրոնական կառավարութիւնը օր օրի վրա ճրիակերների թիւն է աւելացնում, փոխանակ կրճատելու, տնանկների թիւը փոքրացնելու։ Ինչով բացատրել այս։

Պարսկաստանի համարեա ամեն գաւառ, ամեն քաղաք խառնակ և վտանգաւոր դրութեան մէջ է գտնվում այժմ, բացի Գիլանի Րաշտ և Էնզելի քաղաքներից, և յոյս էլ չը կայ, որ նորմալ դրութիւն կը հաստատվի շուտով։ Բայց Թէհրանը այստեղի զինուորական, ժանդարմական և ոստիկանական ճրիակեր ծառայողների ահագին թիւը փոքր համարելով այնտեղից էլ նորանոր խմբեր է ուղարկում, երևակայական փոթորկի առաջն առնելու համար։

Ցաւալի ապագայի առաջ ենք կանգնած, երբ երկիրը և նրա բաղդը տնօրինողները պատահական և անկիրթ մարդիկ են։

Բոլորովին այլ բան է՝ վազել փախչող անկանոն զօրքի ետևից, որպիսին էր Պարսկաստանինը՝ այս ամբողջ կռւի ընթացքում, այլ է երկիրը կառավարել դիպլոմատօրէն, չը վնասելով ընդհանուրի շահերը։

Մայրաքաղաքը վերցնելուց, պարլամենտը կազմելուց համարեա անցել է 17 ամիս, և այքան ժամանակամիջոցում ոչ մի շինարար գործ չէ ձեռնարկվել, չէ կատարվել։ Ժողովուրդը հիասթափվել է «մաշրութայից»—սահմանադրութիւն—և երկրի մէջ կատարվող բոլոր ոճիրները նրան է վերագրում։ Ամբոխը չը տարբերելով կամ գաղափար չունենալով իսկական ազատութեան, սահմանադրութեան մասին՝ կարծում է, թէ այդ վարդապետութիւնը Պարսկաստանի նման խառնակութիւն, անարխիա է քարոզում։

Կենտրոնական կառավարութեան սխալ ընթացքը, անմիտ գործողութիւնը ծնունդ տուեց բացի րէակցիօնէրներից՝ նաև մի մեծ, աւելի ուժեղ դժգոհների դասակարգ, որն ընթացք ստանալով մի նոր յեղափոխութիւն է առաջացնելու և որի գործողութեանը հազիւ թէ դիմանայ Պարսկաստանի՝ այնպէս էլ արիւնաքամ և նիւթապէս քայքայված ժողովուրդը։

Ինչպէս անցեալներն էլ ասել եմ, Թէհրանը վերցնելուց յետոյ չը մշակվեցին սահմանադրութեան համար օրէնքներ, որոնք պէտք է մի ամբողջ անկազմակերպ երկիր կառավարէին, գործերը ղեկավարէին և ոչ թէ նախկին բռնապետութեան նման՝ ամեն մարդ իր խելքի եկածով դատէր, ամեն մի պատահական մարդ պատասխանատու պաշտօնի անցնէր, «դարա խալվաթ, թուլքի բազ» լինէր և երկիրը այս օրին հասցնէր։ Կրթութեան ցենզ, փորձառութիւն է հարկաւոր մեզ նման նահապետական ժողովրդին տուն, ուղղութիւն տալու և գործը անսայթաք առաջնորդելու համար։

Վնասատու և անընդունակ ղեկավարները իրանք պէտք է հեռանան գործից, յանուն երկրի գերագոյն շահերի, թէ չէ՝ սա ինչ գործելակերպ է։

Աթոռացաւով բռնված, փառք ձեռք բերելու անունից տարված մեր «յեղափոխական» ղեկավարները բոլորովին չեն մտածում և ըմբռնում իրանց դերը։ Նրանք գիտակցաբար և անգիտակցաբար երկիրը ծախելուն, գրաւելուն ույժ են տալիս միշտ։ Երկիրը շրջապատված է անպաստ պայմաններով. օտարները սպառնում են չը խաղաղվելու դէպքում՝ իրանց առևտրական շահերը պաշտպանելու համար զօրք մտցնել Պարսկաստան, իսկ մեր կենտրոնական կառավարութեան ղեկավարները մինիստրներ են փոխում ամեն օր իրանց բարեկամներից։

«Մարդ չը կայ երկրում»—ասվել է շատ անգամ, և այժմ էլ կրկնում ենք. և եղածներն էլ կամ համարձակութիւն չունեն անպէտքներին դուրս շպրտել գործից կամ միմեանց հետ դրամի և այլ հաշւով կապված են։ Իսկ այս բոլորից ով է վնասվում.—մասսան, տնանկը, իրաւազուրկը և այլն։

Մուջահիդ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

8 նոյեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Խոլերայով հիւանդ մնում են 25 հոգի։

ՉԵՐԿԱՍԻ։ Բէլօզէրիէ գիւղում երկու զինվածներ պատարագից յետոյ ներս խուժեցին եկեղեցին «ձեռքները վեր» աղաղակներով, յափշտակեցին եկեղեցական փողերը և անյայտացան։

ՏԱԳԱՆՐՈԳ։ Բեսերգէնովկա-Մօրսկայա շրջանում հողի մէջ խրվեցին 20 լիքը վագոններ. երթևեկութիւնը դադարել է։

ՏԱՇԿԵՆՏ։ Կոմս Կամպօ Սցիպիօն թռաւ Անրիօյի մօնօպլանով 150 մետր բարձրութեան վրա, 15 րօպէ։

ՉԻՏԱ։ Երէկ Սեդլօվայա կայարանում տեղի ունեցաւ գնացքի խորտակում. ծանր վիրաւորվեցին երեք, թեթև՝ 10 ճանապարհորդներ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

„Գուտտենբերգ“ գրավաճառանոցում վաճառվում են հետեւեալ ԲԱՌԱՐԱՆՆԵՐԸ.

«Հայերէնից հայերէն», Գաբ ամաճեանի	3—50
Կոյլավ, «Գերմաներէնից հայերէն»	7 —
«Բառարան օտարազգի բառերի», Տէր-Ղազարեանի	1 —
«Բառգիրք լատիներէն և օտարազգի դարձուածքների, համառօտ քերականութիւնով», կազմեց Վ. Ա.	— 75
«Բառգիրք ռուսերէնից հայերէն», Թումանեանի	— 75
«Բառարան ֆրանսերէնից հայերէն», Նուբարեանի	10 —
«Բառգիրք առձեռն հայերէն-գաղիերէն», Ոսկեանի	3—50
«Բառգիրք գաղիերէնէ ի հայ և ի տաճիկ», Աւգերեանի	7—50
«Բառգիրք յաշխարհաբարէ ի գրաբար»	5 —
«Լիակատար բառարան ռուսերէնից հայերէն», Դաղբաշեանի	8 —
Նոյնի «Հայերէնից ռուսերէն», բաժանորդագր.	5 —
«Լիակատար բառարան հայերէն-ռուսերէն», Խուդաբաշեանի, 2 հատոր, 1,838 եր.	10 —
«Բառարան ռուսերէնից վրացերէն», Զուդինօվա	2 —
«Գրպանի բառ. ռուսերէնից ռուսերէն»	— 10
«Գրպանի բառ. հայերէնից հայերէն», Աբեղեանի	— 20
«Նոր բառ. ֆրանսերէնից ռուսերէն»,	— 80

Գրախանութում կան սկսած 1 րուբլուց մինչև 10 ր. ֆրանսերէնից ռուսերէն, ռուսերէնից ֆրանսերէն, ռուսերէնից գերմաներէն և այլն բառարաններ։ Կազմերը սկսած 50 կ.-ից մինչև 1 րուբլի։

Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ „Гуттенбергъ“.

(շ. չ.) 1245. 2—2

5 րուբլի ամեն օր, և աւելի, հեշտութեամբ կարող են վաստակել տղամարդիկ և կանայք՝ ընդունելով պատուէրներ շատ սպառվող մի առարկայի համար։ Դրամագլուխ և գիտութիւն չէ պահանջվում։ Պայմանները, հաւատարմաթուղթը և ամբողջ նիւթեղէնները կուղարկվեն՝ հէնց որ կը ստացվի 21 կոպ. մարկաներով՝ ճանապարհածախսի համար։ Հասցէն՝

О-ву „СЕМИ-ЭМАЛЬ“ г. Лодзь, № 52.

(3,6,10,13,16) (В. 80120) 1207. 5—3

ԲԺԻՇԿ

Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։

Ընդունելութիւնը ամեն օր
12½—2 ժ. ցերեկվա
5—7 ժ. երեկոյեան
Կանանց համար՝ 2—3 ժ. ց.

Հասցէն { Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33.
Сололаки, уголъ Бебутовской и Паскевича, 33.

(չ. ու. կ.) 1124. 100—31

ԲԺԻՇԿ

Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ

Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։

Պրոֆ. Mathieu-ի մասնագիտական կլինիկայից՝ Պարիզում։

Ընդունելութիւն (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.

Ելիզավետինսկայա փող. № 39.

(ա. օ.) 1179. 100—20

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻԱՑՈՒՄՆ

է առաջացնում նորագիւտ, ԱՌԱՆՑ ԽՈՂՈՎԱԿԻ «Նէօֆօն» գրամմոֆօնը, մեր սեփական մարկայով։ Միանգամայն պարզ և բնական ձայնատուութիւն առանց խշշոցի։ Մեր «Նէօֆօնը» բռնելով քիչ տեղ՝ իր շքեղ տեսքով և գեղարուեստական զարդարանքով ծառայում է տան համար իբրև ամենաշքեղ մի զարդ։ Մեր ֆիրմայի համբաւը, որ գոյութիւն ունի վաղուց և արդէն կարողացել է արդարացնել մեր կլիէնտների հաւատը (բազմաթիւ շնորհակալ. նամակներ), միանգամայն երաշխաւորում է ապպարատների բարձր յատկութիւնը՝ չը նայած էժանութեան։ Նէօֆօն, „Prima“ մարկայով, կորպուսը կարմիր փայտից, 37×33×18 սանտ. մեծ., բացվող դռներով՝ ձայնը ազատ հրնչեցնելու համար՝ շատ ամուր մեխանիզմով, տօնարմը նիկէլից, „Cardinal“ կօնցերտային մեմբրանով. 10 հատ պլաստինկաներով և 1000 հատ ասեղներով՝ թիթեղեայ արկղիկում—20 ր. 50 կ.։ Նէօֆօն „Humboldt“, մեծ դիրքով, կորպուսը շքեղ զարդարված՝ «Մօդէրն» ճաշակով, ամենալաւ մեխանիզմով, կօնցերտային կրկնակ մեմբրանով „Simphonique“, 16 պլաստինկաներով և 2000 հատ ասեղներով—26 ր. 50 կ.։ Նէօֆօն „Luxus“ 43×37×19 սանտ. մեծ., կորպուսը կաղնեայ փայտից, գեղարուեստ. քանդակներով, դռնակները նիկէլեայ զարդարանքով, կողմերը կարմիր բակէտներով զարդարված, լարումը 4 պլաստինկայի համար, աշխարհահռչակ «Էկսբիչէն» մեմբրանով, 20 պլաստինկաներով և 3000 հատ ասեղներով—38 ռուբ.։ Բոլոր նէօֆօններին կցվում են մասիվ (ոչ-թիթեղից) պլաստինկաներ, մեծադիր, 10 դիւյմանոց, ռուսական նորագոյն գրութիւններով, օրինակ՝ Վեալցէվայի, Պանինայի, Պլէվիցկայայի, Վօլչակօվի, Կամիօնսկիի եւ այլոց երգածներից։ Մաքսի եւ ճանապարհածախսի համար աւել հաշւվում է 3 ր. 50 կ., „Luxus“ նէօֆօնի համար՝ 3 ր. 75 կ.։ Ասիական Ռուսաստան 1 ր., Արեւել. Սիբիր 2 ր. թանգ։ Պատուէրները կատարվում են վերադիր վճարով։ ՊՐԷՄԻԱ 100 գեղ. բացիկները պարիզեան ժանրով ստանում են նրանք, որոնք կուղարկեն իբրեւ կանխավճար ճանապարհածախսը։ Պատուէրներով դիմել՝ ռուսերէն լեզուով, հետեւեալ հասցէով, որը կարելի է կտրել եւ կպցնել ծրարին։

Торг. Домъ Х. ФИНКЕЛЬШТЕЙНЪ. Германія, Берлинъ, ул. Кантъ 120—70.
Exporthaus H. FINKELSTEIN, BERLIN. Kantstr. 120—70.

(В. 83867.) 1252. 1—1

Типографія „Экономія“, Большая-Вокзальная № 2.